# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

36ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 1 (1751) ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՈՒԱՐ 16, 2016
VOLUME 36, NO. 1 (1751) SATURDAY, JANUARY 16, 2016

Պաշտօնաթերթ՝ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Արտագաղթը Հասած Է՝ Ունեւոր Խաւին

Վերջին տասնամեակներում Հայաստանի առջեւ ծառացած թիւ մէկ խնդիրը երկրէն արտագաղթն է, որ պայմանաւորուած էր տիրող տնտեսական, ընկերային եւ նաեւ քաղաքական իրավիճակներով:

Անցեալին եթէ արտագաղթը ընդհանրապէս տարածուած էր տնտեսապէս անապահով խաւերու մօտ, այժմ արդէն այդ երեւոյթը սկսած է վարակել նաեւ տնտեսապէս աւելի ապահով նկատուողներուն:

Արտագաղթի մասին վերջերս հրապարակուած ուսումնասիրութեան մը մէջ կը կարդանք, որ այժմ կ'արտագաղթեն նաեւ կայացած, լաւ վարձատրուող մարդիկ: «Մարդը Կարիքի Մէջ» հայաստանեան կազմակերպութեան ղեկավարներէն Տաթեւիկ Բեժանեանի այս ուսումնասիրութեան առթիւ կ'ըսէ,- «Եկամուտ ունեն, սակայն չունեն ինչ-որ բան փոխելու որեւէ ակնկալիք, դժգոհ են հայաստանեան իրականութիւնից, իրենց լաւ չեն զգում մի միջավայրում, որտեղ բացակայում է արդարութիւնը: Եթէ մի ժամանակ հիմնականում արտագաղթում էր ոչ բարձր մասնագիտական գիտելիքներ ունեցող խաւը, ապա այժմ գնում են նաեւ սոցիալապէս ապահովուած անձինք: Սա վերջերս կարծես նոր տենդենց է դարձել»:

Ժամանակն է որ Հայաստանի իշխանութիւնները աւելի լուրջ մօտեցում ցուցաբերեն արտագաղթի հարցին շուրջ, զայն դասելով ազգային ընդհանուր աղէտի մակարդակին եւ համապատասխան քայլեր առնեն այդ ուղղութեամբ: Առայժմ, անոնք կամ կը մերժեն անդրադառնալ այս հարցին եւ կամ կը բաւարարուին տարբեր արդարացումներ գտնելով, վիճակագրական տուեալներ աղաւաղելով եւ նոյնիսկ մեղմացնելով արտագաղթի հետեւանքները: Աւելի յաճախ սփիւռքեան ազգային կառոյցներէն է որ մտահոգութիւններ կը հնչեն այս հարցի շուրջ:

Վերջերս յայտարարուեցաւ որ, Հայկական Ցեղասպանութեան 100-ամեակի Միջոցառումները Համակարգող Պետական Յանձնաժողովը աւարտած ըլլալով իր առաքելութիւնը, որոշուած է զայն վերածել Համահայկական Մնայուն Խորհուրդի: Նորակազմ Խորհուրդի ծրագիրներուն մէջ պէտք ընդգրկուի նաեւ արտագաղթի առաջքը առնելու հարցը: Այս նպատակը կը կարօտի երկարաշունչ եւ ծրագրաւորուած աշխատանքի, որուն մէջ մեծ դեր ունին կատարելիք, առաջին հերթին Հայաստանի իշխանութիւնները՝ վերատեսութեան ենթարկելով տարբեր բնագաւառներէն ներս ցարդ իրենց վարած իրենց քաղաքականութիւնը:

«ՄԱՍԻՍ»

## Ռուսական Եկեղեցին Պարզաբանումներ Տուած է Պատրիարք Կիրիլի Յայտարարութեան Կապակցութեամբ

*Վերջին օրերուն Հայաստանի մէջ մեծ վրդովմունք յառաջացուց Համայն Ռուսիոյ պատրիարք Կիրիլի այն յայտարարութիւնը թէ, «Օսմանեան կայսրութեան մէջ ոչ մէկ ցեղասպանութիւն տեղի չէ ունեցած»:*

*Աւելի ուշ, Ռուս եկեղեցւոյ բամբերը եկաւ որոշ պարզաբանումներ տալու եւ յստակութիւն մտցնելու Պատրիարքի խօսքերուն մէջ:*

*Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան կողմէ «Ազատութիւն» ռատիոկայանին փոխանցուած է, որ Համայն Ռուսիոյ պատրիարքի սկանդալային յայտարարութեան վերաբերեալ պատրիարքարանի հրապարակած պարզաբանումէն յետոյ, պաշտօնական Երեւանը յաւելեալ մեկնաբանութիւններու կարիք չի տեսներ:*

*Սուրբ ծնունդի առթիւ ռուսական լրատուամիջոցներուն տրուած հարցազրոյցի մը ընթացքին, պատրիարք Կիրիլ անդրադառնալով այժմ Միջին Արեւելքի եւ Սուրիոյ մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն, ըսած է.- « Քրիստոնեաներու եւ մահմետականներու միջեւ յարաբերութիւնները անամպ չեն եղած պատմութեան մէջ: Մենք գիտենք, որ եղած են եւ՛ բռնի հաւատափոխութեան դէպքեր, եւ՛ Բիւզանդիայի քրիստոնէական տարածքներու գրաւումներ, բայց եթէ փակագիծերը մէկ կողմ ձգենք, բուն ռազմական գործողութիւնները, որ ուղեկցուած են կորուստներով՝ թէ մէկ, թէ միւս կողմէն, ապա երբեք իսլամական աշխարհի մէջ տեղի չէ ունեցած այն, ինչ հիմա կը կատարուի»:*

*Այժմ Մերձաւոր Արեւելքի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները պատրիարք Կիրիլ նկատած է ցեղասպանութիւն՝ հակադրելով անցեալի հետ, իսկ որպէս օրինակ՝ Համայն Ռուսիոյ պատրիարքը բերած է Օսմանեան Թուրքիան: «Այո՛, եղած են քրիստոնէական փոքրամասնութիւններ, բայց անոնց ոչ ոք չէ ոչնչացուցած»,- յայտարարած է Ռուսիոյ պատրիարքը:*



*Համայն Ռուսիոյ պատրիարք Կիրիլ*

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մամլոյ ծառայութեան ղեկավար տէր Վահրամ Մելիքեան յայտնեց, որ ռուսական եկեղեցւոյ կողմէ ստացած են պարզաբանում, ուր նշուած է, թէ Ռուսաստանի եկեղեցւոյ դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան հարցի առնչութեամբ անփոփոխ է:*

*Կիրիլի յայտարարութիւնը, թէ Թուրքիոյ մէջ քրիստոնեաներ չեն*

*Շար.ը էջ 4*

## Ռուսական Անօդաչու Սարքեր Հասած են Հայաստան

*Ռուսաստան անօդաչու սարքեր տեղադրած է Հայաստան իր ռազմակայանին մէջ, կը յայտնէ ԹԱՍՍ գործակալութիւնը:*

*Պաշտօնական հաղորդագրութեան մը մէջ նշուած է, որ խօսքը «Տախիօն» անօդաչուներու մասին է, որոնք ռուսաստանեան արտադրութիւն են: Կը նախատեսուի, որ մէկ ամսուայ ընթացքին ռուսաստանցի զինուորականները բարձրլեռնային վայրերու մէջ կը սորվին ինչպէս կառավարել նոր անօդաչու սարքերը:*

*«Տախիօնները» նախատեսուած են զինուորական հետախուզութեան համար՝ գիշերը եւ ցերեկը, մինչեւ 40 քմ հեռաւորութեամբ:*

*Հայաստանեան քաղաքական մեկնաբաններու կարծիքով Ռուսաստան կը մեծացնէ Հայաստանի տարածքին իր ռազմական զօրակազմը՝ Թուրքիոյ նկատմամբ ուժի ցուցադրութեան նպատակով:*

*Քաղաքական գիտութիւններու դոկտոր Հայկ Մարտիրոսեան մեկնաբանելով վերջին շրջանին ռուսաստանեան յաւելեալ զինամթերքի Հայաստան ժամանումը ըսած է,- «Դա տեղի է ունենում մօտաւորապէս նոյն սցենարով, որով ԱՄՆ-ն ցուցադրական թռիչքներ իրականացրեց Հարաւային Կորէայի երկնքում: Դա մեսիջ էր ուղղուած Հիւսիսային Կորէային: Նմանատիպ ակցիա է Գիւմրիում ռուսական ռազմակայանի վերազինումը նոր սպառազինութիւններով»:*

## Հայկական Կողմը Պատրաստ է Դիմելու Պատասխան Գործողութիւններու

*Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան Նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեան «Ազատութիւն» ռատիոկայանին տրուած հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց, որ սահմանային իրավիճակի լարման համար մեղաւոր է ատրպէյճանական կողմը եւ հետագայ գործողութիւններու ողջ պատասխանատուութիւնը նոյնպէս Պաքուի վրայ է:*

*«Մենք բազմիցս նշել ենք, որ կան հակառակորդի զսպման որոշակի գործողութիւններ, դրանք կանխարգելիչ եւ պատասխան գործողութիւնների մի ամբողջութիւն են, որոնք շատ դէպքերում չեմ կարող բացել: Դրանց հետեւանքները այն կորուստներն են, որ հակառակորդը տարուայ ընթացքում ունենում է», - ըսաւ ան:*

*Արծրուն Յովհաննիսեան շեշտեց, որ տօնական օրերուն սահմանի վրայ իրավիճակը բաւական կայունացած էր, սակայն վերջին օրերուն Ատրպէյճան կրկին սկսած է սրել իրավիճակը: Հակառակորդի կողմէ արձակուած կրակի հետեւանքով, այս տարուայ առաջին զոհը դարձաւ զինուորական ծառայող, 1996-ի ծնունդ Արամայիս Ոսկանեանը:*

*Ղարաբաղի Պաշտպանութեան բանակը նաեւ յայտարարեց, որ կրակոցները չեն դադրած եւ վերջին օրերուն Հայկական դիրքերու ուղղութեամբ արձակուած են տարբեր տեսակի զէնքերով կրակոցներ:*

*Հայաստանի Խորհրդարանի Պաշտպանութեան, Ազգային Անվտանգութեան եւ Ներքին գործերու մշտական յանձնաժողովի անդամ Թեւան Պօղոսեանի կարծիքով՝ իրավիճակը լարելու պատճառը Ատրպէյճանի ներքին խնդիրներն են: Տնտեսական վատ վիճակէն եւ կրօնական խնդիրներէն ուշադրութիւնը շեղելու համար:*

## Միացեալ Նահանգներու Մօտ Հայաստանի Դեսպան Նշանակուած է Գրիգոր Յովհաննիսեանը

*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի որոշմամբ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մօտ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակուած է Գրիգոր Յովհաննիսեանը: Այս մասին կը տեղեկացնէ Հայաստանի նախագահի պաշտօնական կայքէջը:*

*Գրիգոր Յովհաննիսեան վարած է Մեքսիքոյի մէջ դեսպանի եւ Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոսի պաշտօնները:*

*Մէկ այլ հրամանագրով Ուաշինկթընի մօտ Հայաստանի դեսպանի պաշտօնէն ազատուած է Տիգրան Սարգսեան:*

*Յիշեցնենք որ, Հայաստանի նախկին վարչապետ Տիգրան Սարգսեան պիտի նշանակուի Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի նախագահ, երբ Փետրուար 1-ին Եւրասիական Տնտեսական Համագործակցութեան նախագահութիւնը անցնի Հայաստանին:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՅՅԿ-ն Սպառնում է Քաղաքացիական Պատերազմով

*ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ*

«Դուք պատկերացնու՞մ էք, ինչ կը լինի, եթէ Հայաստանի ամէն մի քաղաքացի ցանկանայ Ազատութեան հրապարակում տօնածառ դնել ու Նոր տարին այնտեղ տօնել», յայտարարում է ՀՀԿ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Վահրամ Բաղդասարեանը, իրաւաչափ համարելով Դեկտեմբերի 31-ին Նոր Հայաստան միաւորման դէմ ոստիկանութեան գործողութիւնը:

Քաղաքապետարանը Նոր Հայաստանին թոյլ չէր տուել տօնածառ դնել Ազատութեան հրապարակում, ոստիկանութիւնն էլ խոչընդոտել էր տօնածառի համագեստով ակտիւիստների մուտքը հրապարակ: Դրա հետեւանքով բերման էին ենթարկուել մի քանի երիտասարդներ, իսկ ոստիկանի հանդէպ ուժ կիրառելու մեղադրանքով էլ ձերբակալուել ու կալանաւորուել է Նոր Հայաստանի ակտիւիստ Գէորգ Սաֆարեանը:

Փաստօրէն, Վահրամ Բաղդասարեանը համարում է, որ իշխանութիւնը պէտք է որոշի, թէ քաղաքացին որտեղ կարող է Նոր Տարի նշել ու ինչպէս: Օրինակ, Վահրամ Բաղդասարեանը երբեք չի տարակուսի, թէ «պատկերացնու՞մ էք, քաղաքացիները վարկ վերցնեն ու Նոր տարի նշեն»:

Որովհետեւ եթէ Վահրամ Բաղդասարեանը դրա վերաբերեալ տարակուսի, ապա նրա խմբակցութեան «ենթակայ» Սամուէլ Ալեքսանեանը կարող է նեղանալ Բաղդասարեանից: Չէ՞ որ երբ քաղաքացին վարկով Նոր տարի է նշում, դա հարստացնում է Սամուէլ Ալեքսանեանին: Իսկ եթէ Սամուէլ Ալեքսանեանը հարուստ է, ապա հարուստ է ամբողջ իշխանութիւնը: Հետեւաբար, ՀՀԿ-ի համար «թոյլատրելի» է, որ քաղաքացիները կարող են վարկով Նոր Տարի դիմաւորել, իսկ ահա տօնածառով, այն էլ հրապարակում, անթոյլատրելի է:

Բայց, պարզւում է, որ Վահրամ Բաղդասարեանի համար ոչ միայն տօնածառով Ազատութեան հրապարակում Նոր Տարի դիմաւորելն է հակապետական, այլ քաղաքացու ինքնապաշտպանութեան իրաւունքը:

Նոր Հայաստանը տարածել է յայտարարութիւն, որտեղ ասւում է, որ քաղաքացիները ստիպուած կը լինեն զէնքով ինքնապաշտպանուել, եթէ իրաւապահները չեն կարողանում քաղաքացուն պաշտպանել բռնութիւնից: Նոր Հայաստանի յայտարարութիւնը տարածուել էր միաւորման ակտիւիստ Սիւզի Գէորգեանի հանդէպ բռնութիւնից յետոյ: Ինչպէս բոլոր այդօրինակ դէպքերում, այս դէպքում էլ իրաւապահները չեն յայտնաբերել բռնութիւն գործադրողներին:

«Այդ յայտարարութիւնն անողներին ես, օրինակ, մտածում եմ, որ ընդհանրապէս պէտք է մեկուսացնել հասարակութիւնից: Այսինքն՝ քաղաքացիական պատերազմի կո՞չ են անում: Ի՞նչ ինքնապաշտպանութեան մասին է խօսքը: Ինչ է՝ Հայաստանում կամ ցանկացած երկրում նման միջադէպեր չե՞ն լինում, եւ ոստիկանութիւնն էլ պէտք է զբաղուի այդ գործերով: Կոչ են անում, որ երիտասարդներին հանեն իրար դէ՞մ, ազգը ազգի դէ՞մ: Վտանգաւոր է, որ ընդհանրապէս նման կոչ անողները չփուեն հասարակութեան հետ, դրա մէջ կը համոզուէք ապագայում», յայտարարում է Վահրամ Բաղդասարեանը:

Ինչ ինքնապաշտպանութեան մասին է խօսքը: Փաստօրէն, ՀՀԿ խմբակցութեան ղեկավարը քաղաքացուն զրկում է ինքնապաշտպանութեան իրաւունքից: Ի՞նչ է ասում Նոր Հայաստանը: Շատ պարզ բան: Եթէ պետական համակարգը չի կարողանում քաղաքացուն պաշտպանել բռնութիւնից, ապա քաղաքացին ունի ինքնապաշտպանութեան իրաւունք: Բայց, Վահրամ Բաղդասարեանը քաղաքացու ինքնապաշտպանութեան իրաւունքը դարձնում է քաղաքացիական պատերազմի հոմանիշ:

Ինքնապաշտպանութեան իրաւունքը մարդու հիմնարար իրաւունքներից մէկն է: Աւելին, ոչ միայն մարդու, այլ ընդհանրապէս պետութեան անվտանգութեան, առաջադիմութեան գրաւականներից մէկը: Ինքնապաշտպանութեան իրաւունքն է, որ պետութեանը եւ սուբիեկտներին ստիպում է գալ սահմանադրական համակեցութեան:

Հակասահմանադրականութիւնը սկսւում է այնտեղ, որտեղ կասկածի տակ է դրւում քաղաքացու ինքնապաշտպանութեան իրաւունքը: Նոր Հայաստանը արել է ոչ թէ քաղաքացիական պատերազմի, այլ սահմանադրական կարգի բերող կոչ: Իսկ սահմանադրական կարգը քաղաքացիական համերաշխութեան, ոչ թէ պատերազմի հոմանիշն է: Քաղաքացիները համերաշխութեան են գալիս խաղի իրաւական կանոնների շուրջ:

ՀՀԿ խմբակցութեան ղեկավարը փաստացի անում է հակասահմանադրականութեան կոչ: Դա է քաղաքացիական պատերազմի կոչը: Որովհետեւ քաղաքացուն ինքնապաշտպանութեան իրաւունքից զրկելը, այդ իրաւունքը որեւէ կերպ կասկածի տակ դնելը քաղաքացիական պատերազմի հրահրման առաջին քայլն է:

Ինքնապաշտպանութեան իրաւունքը հասարակական-պետական կեանքի հաւասարակշռութիւնն ապահովող առանցքն է բոլոր արդիական պետութիւններում: Եթէ չկայ այդ առանցքը՝ չկայ հաւասարակշռութիւն: Չկայ այդ հաւասարակշռութիւնը, խախտւում է պետութեան դիմադրունակութիւնը թէ ներքին, թէ արտաքին սպառնալիքների հանդէպ: Հետեւաբար դա բերում է ոչ միայն ներքին՝ քաղաքացիական պատերազմի սպառնալիքի, այլ նաեւ արտաքին ագրեսիայի սպառնալիքի:

«ԼՐԱԳԻՐ»

# Ալիեւին Ուաշինկթոնում Լուրջ «Գլխացաւանք» Է Սպասում

*ՄԵՏԱՔՍԻԱ ՇԱԼՈՒՆՑ*

ԱՄՆ-ի նախագահ Պարաք Օպաման Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւին հրաւիրել է ԱՄՆ՝ մասնակցելու միջուկային անվտանգութեան հարցերով չորրորդ գագաթաժողովին:

Ատրպէյճանական ԶԼՄ-ների փոխանցմամբ՝ Twitter-ի իր միկրոբլոգում համապատասխան գրառում է կատարել Նովրուզ Մամեդովը՝ Ատրպէյճանի նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալը, ով պատասխանատու է արտաքին կապերի համար: Գագաթաժողովը կայանալու է Ուաշինկթոնում:

Կը գնա՞յ արդեօք Ալիեւը Օպամային հանդիպելու, երբ արդէն տեւական ժամանակ ԱՄՆ-ի վարչակազմի կողմից ենթարկւում է աննախադէպ ճնշումների ու քննադատութեան, եւ իրավիճակն արդէն հասել է այն աստիճան, որ Ալիեւը յուսահատութիւնից իր երկրի խորհրդարան է մտցնում ԱՄՆ-ի դէմ «պատժամիջոցների» ծիծաղելի նախագիծ:

Այն, որ Ուաշինկթոն մեկնելու դէպքում Օպամայի կողմից Ատրպէյճանի նախագահին «սթափեցնելու» գործիքներ կը կիրառուեն, կասկած չկայ: Ռուսաստան-Ատրպէյճան ջերմ յարաբերութիւնները մի կողմից, միւս կողմից ղարաբաղեան կարգաւորման գործընթացում Ատրպէյճանի ապակառուցողական կեցուածքն արդէն բոլորին է նեարդայնացնում: Գումարած ամենագլխաւոր խնդիրը՝ Ատրպէյճանում մարդու իրաւունքներն ու ժողովրդավարութիւնն արժէքների կոպիտ խախտումները ու դէպի բռնատիրութիւն Ալիեւի ռեժիմի հաստատուն քայլերը:

Այնպէս, որ Ալիեւը ԱՄՆ մեկնելու դէպքում լուրջ «գլխացաւանքների» տակ է ընկնելու, եթէ իհարկէ, վերջնականապէս որոշում կայացնի մեկնել Ուաշինկթոն:

Իսկ մինչ այդ ամերիկացի նախկին պաշտօնեաները, փորձագէտներն ու մամուլը շարունակում են անխնայ քննադատել Ալիեւի ռեժիմը: Ատրպէյճանական Turan լրատուական գործակալութեանը տուած հարցազրոյցում Freedom House-ի նախկին ղեկավար, Մարդու իրաւունքների ու ժողովրդավարութեան Մաքքէյնի ինստիտուտի տնօրէն Դեւիդ Կրամերն անդրադարձել է նաեւ տարածաշրջանում Ատրպէյճանի դիրքին:

Կրամերին հարցրել են, թէ ինչ է մտածում այն կապակցութեամբ, որ «Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը կանոնաւորապէս կրկնում է, որ անկախ է, եւ որ ոչ ոք ու ոչինչ չի կարող ճնշում գործադրել իր վրայ, եւ որ Ատրպէյճանը վարում է անկախ քաղաքականութիւն»:

Ի պատասխան՝ Կրամերը յայտարարել է. «Եթէ Ատրպէյճանը գտնուէր այնտեղ, որտեղ որ Շուէյցարիան է, նման յայտարարութիւնները կը հնչէին աւելի համոզիչ: Սակայն երբ մի կողմում Ռուսաստանն է, իսկ միւս կողմում՝ Իրանը, ճիշդ կը լինէր ասել, որ երկիրը գտնւում է բարդ տեղում եւ ոչ պարզ իրավիճակում:

Եւ եթէ Ալիեւը ցանկանում է իրեն հեռացնել Արեւմուտքից, ինչը նա յաջողութեամբ անում է, ապա դա նշանակում է միայն մէկ բան. Ռուսաստանն ու Իրանը կ՚ունենան աւելի մեծ ազդեցութիւն եւ աւելի մեծ ճնշում կը գործադրեն Ատրպէյճանի վրայ: Ինձ համար անկասկած է, որ նմանատիպ քաղաքականութիւնը սխալ եւ վտանգաւոր է»,- ասել է նա:

Պաքուի անկախ վերլուծաբանները մտավախութիւն ունեն, որ Ատրպէյճանի իշխանութիւնների ներկայիս քաղաքականութիւնը կը յանգեցնի Ուաշինկթոնի աջակցութեան կորստին, ինչը կ՚ուժեղացնի Ռուսաստանից նրա կախուածութիւնը եւ կը յանգեցնի անկախութեան թուլացմանը: Գնահատելով այդ հեռանկարները՝ Կրամերը յայտարարել է. «Մաքուր աշխարհագրական տեսանկիւնից Ռուսաստանից հեռանալն անհնար է, սակայն Ատրպէյճանը կարող էր իր համար բացել աւելի մեծ հնարաւորութիւններ՝ սերտ կապեր ունենալով ԱՄՆ-ի ու Եւրոպայի հետ: Ատրպէյճանի հարեւաններն արդէն իսկ ընթանում են այդ ուղով, իսկ Պաքուն ժամանակ է կորցնում»:

Այսպէս, Ատրպէյճանի հանդէպ Ուաշինկթոնի վերաբերմունքը մնում է անփոփոխ՝ Ատրպէյճանում մարդու իրաւունքներն ու ժողովրդավարութիւնն արժէքներ ու առաջնահերթութիւններ են, Ռուսաստանի իշխանութիւնների հետ Ատրպէյճանի նախագահի բարի դրացիական յարաբերութիւնները:

Ծանր օրեր են սպասում Ալիեւին Վաշինգտոնում:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՃԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

www.massispost.com
daily news updates

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# «Նոր Հայաստան» Շարժումը Իր Անդամների Դէմ Իրականացուող Բռնութիւններին Հակազդող Խումբ Կը Ստեղծի

«Նոր Հայաստան» ընդդիմադիր շարժման անդամները, քաղաքացիական այլ ուժերի հետ համագործակցութեամբ, պատրաստւում են ստեղծել իրենց դէմ իրականացուող բռնութիւններին հակազդելու խումբ:

«Ամսի 31-ին տեղի ունեցած բռնութիւններից յետոյ, որի արդիւնքում Գէորգ Սաֆարեանը կալանաւորուեց, դրանից յետոյ Սիւզիի նկատմամբ բռնութիւն կիրառուեց, միտք առաջացաւ, որպէսզի մենք էլ կարողանանք որոշակի ինչ-որ համակարգ ստեղծել, որը համակարգուած կ'աշխատի. դա իրաւապաշտպան կազմակերպութիւնների միջոցով ճնշումներն են, կոնկրետ ոստիկաններին անհատապէս ծաղրանքի, պարսաւանքի ենթարկելն է»,- ասաց «Նոր Հայաստան»-ի անդամ Արմէն Միքայէլեանը:

«Խումբ չստեղծելով արդէն վտանգուած ենք: Պիտի փորձենք արդէն ինքնապաշտպանուել, դա էլ ինքնապաշտպանութեան մեխանիզմներից մէկն է»,- ասաց Միքայէլեանը:

Օրեր առաջ իրեն ծեծի ենթարկելու մասին յայտարարեց «Նոր Հայաստան»-ի անդամ Սիւզի Գէորգեանը, իսկ շարժման անդամ Գէորգ Սաֆարեանը երկամսեայ կալանքի ենթարկուեց՝ Ամանորի գիշերը իշխանութեան ներկայացուցչի նկատմամբ բռնութիւն գործադրելու մեղադրանքով:

Human Rights Watch միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը յայտարարութիւն է տարածել՝ կոչ անելով ազատ արձակել ակտիւիստին եւ անկողմնակալ հետաքննութիւն անցկացնել:

«Հայաստանի իշխանութիւնները նաեւ պէտք է քննարկեն ոստիկանութեան վարքագիծը եւ ոստիկանական հնարաւոր միջամտութիւնը կարծիքի, արտայայտման եւ հաւաքների իրաւունքների իրացմանը»,- յայտարարել է իրաւապաշտպան կազմակերպութիւնը, ընդգծելով, որ երկամսեայ կալանքը բոլորովին արդարացուած չէ՝ հաշուի առնելով միջադէպի չնչին բնոյթը:

# ««Ժառանգութեան» Վերակազմաւորման Հարց Կը Ծագի, Երբ Ընտրացուցակի Հարց Առաջանայ». Արմէն Մարտիրոսեան



«Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեան

«Ժառանգութիւն» կուսակցութիւնը վերակազմաւորման կարիք չունի եւ «Նոր Հայաստան» ճակատի շրջանակում պայքարում է արտահերթ ընտրութիւնների հասնելու համար: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանն՝ անդրադառնալով կուսակցութեանն ուղղուած այն քննադատութիւններին, թէ պառակտուել են ու կորցրել երբեմնի հեղինակութիւնը:

«Ժառանգութիւնն» ինչպէս եղել է, այնպէս էլ մնացել է, եթէ համարենք, որ 2012-ի ընտրացուցակի հետ կապուած ինչ-որ հարցեր եղան, ապա դրանք դեռ կը քննարկուեն: Ամէն դէպքում, 2017 թուականի հետ կապուած որեւէ որոշում չկայ, որովհետեւ «Ժառանգութիւնն» այս պահին «Նոր Հայաստանին» է միացել ու պայքարում է արտահերթ ընտրութիւնների, իշխանափոխութեան համար: Վերակազմաւորուելու հարց կը ծագի այն ժամանակ, երբ ընտրացուցակի հարց առաջանայ»,- նշեց նախկին պատգամաւորը:

Նա ընդգծեց, որ իրենց համար հիմա առաջնահերթ են արտահերթ ընտրութիւնները:

«Ռեսթարթի կարիք «Ժառանգութիւնում» չկայ, քանի որ կուսակցութիւնում որեւէ էական փոփոխութիւն չկայ: Կարող է մի քանի պատգամաւորի հետ կապուած խնդիր եղել է, բայց կուսակցութիւնում ռեսթարթի խնդիր ծրագրային առումով չկայ: Գործունէութեան հետ կապուած՝ հնարաւոր է: Կարծում եմ՝ առաջիկայում կերեւայ: Բայց մեր ուժերը կենտրոնացած են «Նոր Հայաստանի» շրջանակում գործունէութիւն ծաւալելուն եւ ձգտում ենք հասնել արտահերթ ընտրութեան»,-ասաց Արմէն Մարտիրոսեանը:

# ՀԱԿ-ն Առաջարկում Է Ազատ Արձակել Քաղբանտարկեալներին

Եւրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵԽԽՎ) Ղարաբաղի վերաբերեալ վիճայարոյց զեկոյցներին դիմակայելու համար Հայ Ազգային Կոնկրէսը պահանջում է մինչեւ ձմեռային նստաշրջանի մեկնարկը ազատ արձակել Շանթ Յարութիւնեանին եւ նրա համախոհներին, ինչպէս նաեւ Դեկտեմբերի 31-ից ճաղերի ետեւում յայտնուած Գէորգ Սաֆարեանին: Ընդդիմադիր կուսակցութիւնը պնդում է՝ վերջիններս քաղբանտարկեալ են:

«Ոչինչ չի խանգարում Հայաստանին ձմեռային նստաշրջանից առաջ քայլ անել՝ բոլոր քաղբանտարկեալներին ազատ արձակել: Ես կարծում եմ, որ ԵԽԽՎ-ում որոշ շրջանակների վրայ դա ինչ-որ չափով տպաւորութիւն կը թողնի՝ մեղմացնելով վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ»,- ասում է ՀԱԿ խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը:

Մօտ երկու շաբաթից Ստրասբուրգում քուէարկութեան կը դրուեն «Բռնութիւնների աճը Լեռնային Ղարաբաղում եւ Ատրէյճանի այլ գրաւեալ տարածքներում», ինչպէս նաեւ «Ատպէյճանի սահմանային բնակչութիւնը միտումնաւոր զրկուած է ջրից» վերտառութեամբ զեկոյցները, որոնցում հայկական կողմի համար անընդունելի մի շարք կէտերի թւում, մասնաւորապէս, կոչ է արւում «դուրս բերել հայկական զինուժը Լեռնային Ղարաբաղից եւ Ատրպէյճանի միւս գրաւեալ տարածքներից, հաստատել այդ տարածքներում Ատրպէյճանի լիակատար ինքնիշխանութիւնը»:

Լեւոն Զուրաբեանի պնդմամբ՝ այս զեկոյցների քուէարկութեանը Հայաստանի դիրքերն աւելի խոցելի կը լինեն, եթէ ընդդիմադիրները շարունակեն մնալ ճաղերի ետեւում:

# ՀՀԿ. «Պէտք Է Մեկուսացնել Զինուած Ինքնապաշտպանութեան Կոչ Անողներին»

Իշխող Հանրապետական խմբակցութեան ղեկավարի համոզմամբ, պէտք է մեկուսացնել բոլոր նրանց, ովքեր զէնքով ինքնապաշտպանուելու մասին յայտարարութիւններ են անում:

«Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատը, անդրադառնալով վերջին օրերին իր անդամների նկատմամբ իրականացուած «ոստիկանական բռնութիւններին», յայտարարել է, որ եթէ պետութիւնն ի վիճակի չէ պաշտպանել քաղաքացուն, ապա «առնուազն չի խոչընդոտում տուեալ քաղաքացիների կողմից բոլոր հնարաւոր միջոցներով, այդ թւում՝ զէնքով ինքնապաշտպանութեանը»:

«Այդ յայտարարութիւնն անողներին ես, օրինակ, մտածում եմ, որ ընդհանրապէս պէտք է մեկուսացնել հասարակութիւնից: Այսինքն՝ քաղաքացիական պատերազմի կո՞չ են անում: Ի՞նչ ինքնապաշտպանութեան մասին է խօսքը: Ինչ է՝ Հայաստանում կամ ցանկացած երկրում նման միջադէպեր չե՞ն լինում, եւ ոստիկանութիւնն էլ պէտք է զբաղուի այդ գործերով: Կոչ են անում, որ երիտասարդներին հանեն իրար դէ՞մ, ազգը ազգի դէ՞մ: Վտանգաւոր է, որ ընդհանրապէս նման կոչ անողները չփուեն հասարակութեան հետ, դրա մէջ կը համոզուէք ապագայում:

Ես չգիտեմ՝ դրանք ումով են ուղղորդւում, նախ պէտք է ճշդել: Ես գնալով միանշանակ համոզւում եմ, որ ուղղորդողներ կան, որովհետեւ այդպէս չսիրել իրենց երկիրը, իրենց պետութիւնը եւ անընդհատ ցանկանալ լարել ներքաղաքական իրավիճակը, խոչընդոտներ ստեղծել առանց այդ էլ արտաքին աշխարհի այս մարտահրաւէրների պայմաններում...»,- ասաց Վահրամ Բաղդասարեանը:

ՀՀԿ խմբակցութեան ղեկավարն իրաւաչափ է համարում անցած Դեկտեմբերի 31-ին ոստիկանութեան իրականացրած գործողութիւնները, երբ իրաւապահները «Նոր Հայաստան»-ի անդամներին թոյլ չտուեցին տօնածառ տեղադրել հրապարակում:

# Կարէն Անդրէասեանը Հրաժարականի Դիմում Է Ներկայացրել

Յունուար 12-ին հրաժարականի դիմում է ներկայացրել ՀՀ մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրէասեանը:

«Պաշտպանը շնորհակալութիւն է յայտնում բոլոր գործընկերներին համատեղ աշխատանքի համար եւ յոյս է յայտնում, որ մարդու իրաւունքների պաշտպանութիւնը կը շարունակի մնալ մեր պետութեան եւ հասարակութեան առաջնահերթութիւնը: Այս կապակցութեամբ այլ մեկնաբանութիւններ չեն լինելու»,- ասուած է Մարդու իրաւունքների պաշտպանի գրասենեակի «Ֆէյսբուք»-ի պաշտօնական էջում տեղադրուած յայտարարութիւնում:

Մօտ հինգ տարի պաշտօնավարած Կարէն Անդրէասեանի գլխին «սեւ ամպեր» սկսեցին կուտակուել մի քանի ամիս, երբ նրա տարեկան զեկոյցը բուռն բանավէճ յարուցեց խորհրդարանում: Իշխող ուժի՝ ՀՀԿ-ի պատգամաւորները օմբուդսմենին մեղադրեցին ոչ-պրոֆեսիոնալիզմի մէջ, իսկ նրանցից Սամուէլ Ֆարմանեանը ներկայացուած փաստաթուղթը «փնթի ու անատամ» որակեց:

Կարէն Անդրէասեանը հակադարձել էր, թէ իր դէմ պատուէր է իրականցւում՝ առանց յստակ անուններ նշելու:

Ըստ օրէնքի, Մարդու իրաւունքների պաշտպանի լիազօրութիւնները դադարում են, եթէ նա Ազգային ժողովին հրաժարական ներկայացնելուց ոչ ուշ, քան 10 օր յետոյ կրկնում է իր հրաժարականը:

Նորացուած Սահմանադրութեամբ, ի դէպ, օմբուդսմենին նշանակւում է Ազգային ժողովը՝ ձայների երեք հինգերորդով պաշտօնը թափուր մնալուց յետոյ մէկ ամսուայ ընթացքում:

# Հայաստան Ուղարկուող Մասնաւոր Տրանսֆերտները Շարունակում Են Նուազել Աhռելի Տեմպերով

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Արտաքին աշխարհից դէպի Հայաստան ուղարկուող ոչ առեւտրային դրամական փոխանցումները՝ մասնաւոր տրանսֆերտները շարունակում են նուազել ահռելի տեմպերով: Այս մասին են վկայում ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած պաշտօնական տուեալները: Այդ տուեալների համաձայն անցած տարուայ Նոյեմբերին մասնաւոր տրանսֆերտների զուտ ներհոսքի ծաւալը կազմել է 68.4 միլիոն դոլար, 2014 թուականի Նոյեմբերին արձանագրուած աւելի քան 90 միլիոն դոլարի դիմաց (Նուազումը՝ 24 տոկոս):

Սա յատկապէս ուշագրաւ է նրանով, որ 2014 թուականին մասնաւոր տրանսֆերտների ծաւալը դրան նախորդած տարուայ համեմատ արդէն իսկ նուազել էր 35 տոկոսով: Այսպիսով, մասնաւոր տրանսֆերտների ծաւալը երկու տարուայ ընթացքում Նոյեմբեր ամսուայ կտրուածքով նուազել է աւելի քան 2 անգամ:

Նշենք, որ մասնաւոր տրանսֆերտների այսպիսի փոքր ծաւալ չէր արձանագրուել անգամ 2008-2009 թուականների համաշխարհային ճգնաժամի ընթացքում»:

## ԼՈՒՐԵՐ

# «Հայ-Ռուսական Յարաբերութիւնների Հակառակորդները Վնասում Են Հայաստանի Շահերին».- Փորձագէտ

Հայաստանում Ռուսաստանի ընկալումը չի վատացել: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նման տեսակէտ է յայտնել Մոսկուայի միջազգային յարաբերութիւնների պետական ինստիտուտի ռազմա-քաղաքական հետազօտութիւնների առաջատար փորձագէտ, քաղաքական գիտութիւնների դոկտոր Միխայիլ Ալեքսանդրովը:

Պատասխանելով Հայաստանի հասարակութիւնում ու լրատուամիջոցներում որոշ հակառուսական միտումների մասին հարցին՝ փորձագէտը նկատեց, որ տարբեր աղբիւրներից տեղեկութիւններ է ստանում Հայաստանի մասին: «Յարաբերութիւնների սկզբունքային վատացում չեմ նկատում: Այն փաստը, որ հայերի ճնշող մեծամասնութիւնը կողմ է արտայայտուել ԵՏՄ-ին անդամակցելուն, հաստատում է իմ խօսքերը: Բայց ճիշդ է նաեւ այն, որ վերջին ժամանակներս Երեւանում՝ մանաւանդ մամուլում, ակտիւ հակառուսական քարոզչութիւն է իրականացւում՝ ռուս- հայկական յարաբերութիւնները վարկաբեկելու նպատակով:

Բայց որպէս կանոն դա անում են այն մարդիկ, որոնք կապուած են արեւմուտքից ֆինանսաւորուող զանազան ՈԿԿ-երի հետ: Նրանք նման տեսակէտներ են տարածում, ըստ էութեան տեղեկատուական պատերազմ են վարում՝ շահարկելով երկկողմանի յարաբերութիւններում զանազան բարդութիւնները»,- նշեց փորձագէտը: Որպէս օրինակ նա յիշեցրեց այն իրավիճակը, որը ստեղծուել էր Գիւմրիում ռուս զինուորի կողմից հայ ընտանիքի սպանութիւնից յետոյ:

«Բանն այն է, որ տեղեկատուական պատերազմ է ընթանում, այն առաջին հերթին Ռուսաստանի, նաեւ նրա դաշնակիցների դէմ է: Եթէ Ռուսաստանի ու Հայաստանի կապը խզուի, Հայաստանը մենակ կը մնայ, ու թշնամիները արագ կը խեղդեն նրան: Այնպէս որ սա միայն Ռուսաստանի դէմ չէ: Սա հենց Հայաստանի դէմ է: Ո՛չ Լոնտոնը, ո՛չ Փարիզը, ո՛չ էլ Ուաշինկթընը չեն պաշտպանի նրան: Այդ մարդիկ, որոնք աշխատում են արեւմտեան փողերով, ըստ էութեան սեփական երկրին են վնասում: Սակայն ես չեմ կարծում, թէ հայերը կը տրուեն այդ սադրանքներին: Հայաստանում մայդան կազմակերպելու փորձերը պարբերաբար ձախողում են: Ամենայն հաւանականութեամբ այդ մտայղացումից ոչինչ չի ստացուի: Այդուհանդերձ, պէտք է շատ զգոն լինել: Յոյս ունեմ, որ հայկական հայրենասիրական հասարակայնութիւնը նրանց արժանի պատասխան կը տայ»,- ամփոփեց Միխայիլ Ալեքսանդրովը:

# Ալիեւը Խոստովանել Է Որ Հայաստանի Նախագահի Հետ Հանդիպումները Ձեւական Բնոյթ Են Կրում

Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցում 2015 թուականին որեւէ առաջընթաց չի արձանագրուել, իսկ նախագահների վերջին հանդիպումը նոյնպէս զուտ ձեւական բնոյթէ կրել: ԱՊԱ գործակալութեան փոխանցմամբ, Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւն այս մասին յայտարարել է կառավարութեան նիստում:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերի հանդէպ իր ձեւական վերաբերմունքի մասին խոստովանութիւնից յետոյ, Ալիեւը կրկին մեղադրանքներ է հնչեցրել նրանց հասցէին: Մասնաւորապէս, նա եռանախագահներին մեղադրել է այն բանում, որ նրանք ճնշում չեն գործադրում «օկուպացիոն» քաղաքականութիւնը շարունակող Հայաստանի վրայ:

Այնուհետեւ Ալիեւը հերթական անգամ ներկայացրել է միջազգային իրաւունքի՝ սեփական միակողմանի մեկնաբանութիւնները, որը, ըստ նրա, հիմնուած է միայն պետութիւնների տարածքային ամբողջականութեան սկզբունքի վրայ:

---

# Ռուսական Եկեղեցւոյ Պարզաբանումները

*Շարունակուած էջ 1-էն*

ոչնչացուած, դժգոհութիւն յառաջացուց Հայաստանի մէջ: Սակայն, Յունուար 11-ի երեկոյեան լրատուամիջոցներով տարածուեցաւ պատրիարքի մամլոյ քարտուղարի մեկնաբանութիւնը՝ հայաստանեան լրատուամիջոցներուն համար:

Ռուս Ուղղափառ եկեղեցւոյ կողմէ կատարուած պարզաբանման մէջ ըսուած է, որ իրենց դիրքորոշումը Հայոց ցեղասպանութեան հարցով անփոփոխ է: Որպէս օրինակ տալով Ռուս Ուղղափառ եկեղեցւոյ ամենաբարձր մակարդակով մասնակցութիւնը Հայ Առաքելական եկեղեցւոյ կարեւոր իրադարձութիւններուն եւ Ցեղասպանութեան 100-ամեակի միջոցառումներուն:

Տէր Վահրամ շեշտեց, որ Ռուս Ուղղափառ եկեղեցին մշտապէս զօրակցած է Ցեղասպանութեան ճանաչման հարցով՝ աւելցնելով, որ Մոսկուայէն ստացուած պատասխանին մէջ ամէն ինչ ըսուած է, եւ Հայ Առաքելական եկեղեցին աւելցնելու ոչինչ չունի:

«Մի բան յստակ է, որ պէտք չէ աւելորդ տեղը քաղաքականացնել այս ամէնը: Որովհետեւ միմիայն մի արտայայտութեամբ, որը նաեւ կոնտեքստից դուրս է հանուած, դատել ամբողջ եկեղեցու դիրքորոշման մասին, կարծում եմ, տեղին չէ: Առաւել եւս, որ այդ եկեղեցու դիրքորոշումը տարբեր առիթներով եւ տարբեր կերպերով մշտապէս արտայայտուել է, եւ զօրակցութիւն ցուցաբերուել է թէ՛ հայ ժողովրդին, թէ՛ հայ եկեղեցուն եւ թէ՛ մեր հայրենիքին»,- ըսաւ Տէր Վահրամ :

# Ռուսաստանցի Փորձագէտ.- Մոսկուան Աւելի Ակտիւ Կը Զբաղուի Հայաստանում Ռազմաբազայով

Ռուս-Թուրքական լարուածութիւնը առնուազն երկու տարի կը տեւի, եւ դրա ֆոնին Մոսկուան աւելի ակտիւօրէն կը զբաղուի Հայաստանում ռազմական բազայով: «Ազատութեան» հետ զրոյցում նման կարծիք յայտնեց ռուսաստանցի ռազմական հարցերով փորձագէտ, ԱՊՀ ինստիտուտի Կովկասի բաժնի ղեկավար Վլադիմիր Եւսեեւը:



ԱՊՀ ինստիտուտի Կովկասի բաժնի ղեկավար Վլադիմիր Եւսեեւ

Անցած Դեկտեմբերին, յիշեցնենք, Հայաստանում ռուսական ռազմաբազան համալրուեց տասնեակ նոր մարտական եւ տրանսպորտային ուղղաթիռներով, այս տարուայ սկզբին էլ Ռուսաստանը յայտարարեց, որ 2016-ի երկրորդ կէսին ռազմակայանում ՄիԳ-29 արդիական կործանիչների նոր խմբաքանակ, ինչպէս նաեւ եւս մէկ տրանսպորտային ուղղաթիռ է տեղակայելու:

«Ուղղաթիռներն առաջին քայլն է, կը լինի եւ հակաօդային պաշտպանութեան նոր համակարգ, յոյսով եմ՝ Ռուսաստանը Հայաստան կը բերի նաեւ «Իսկանդեր»-ներ», - ասում է Եւսեեւը:

Ամէն դէպքում, պարտականութիւնները Հայաստանի նկատմամբ կան, եւ Ռուսաստանը պէտք է հնարաւորինս չէզոքացնի Թուրքիայից եկող վտանգը, իսկ այդպիսի վտանգը բացառել պէտք չէ: Ռազմական գործողութիւնների Թուրքիայի դէմ Ռուսաստանը չի գնայ, համոզուած է փորձագէտը, սակայն նա չի բացառում, որ Անգարան դիմի նոր սադրանքների:

Ինչ վերաբերում է վերջին երկու ամիսներին հայաստանեան մամուլում ակտիւօրէն քննարկուող այն թեմային, թէ հնարաւոր է, որ Ռուսաստանը վերանայի մոսկովեան պայմանագիրը (որի համաձայն, օրինակ, 1921 թուականին Արարատ լեռն անցել է Թուրքիային), նման բան, Եւսեւի համոզմամբ, գրեթէ բացառուած է:

«Ռուսաստանը երբեք չի քանդի այն իրավա-պայմանագրային բազան, որ այսօր ունի Թուրքիայի հետ: Ռուսաստանի համար այս համակարգի քանդումը խիստ անցանկալի է, քանի որ այսօր Ռուսաստանը, այսպէս թէ այնպէս, ներքաշուած է մի շարք հակամարտութիւնների մէջ: Կարող եմ նոյնիսկ ասել, որ Ռուսաստանը չի պատերազմի Թուրքիայի դէմ Թուրքիայի տարածքում, բայց կը պատերազմի Թուրքիայի տարածքից դուրս: Այս կտրուածքով, եթէ օրինակ՝ Թուրքական ռազմական օդանաւերը հատեն հայկական սահմանը, Ռուսաստանը իրաւունք ունի այդ օդանաւերը խոցելու»,- շեշտեց ԱՊՀ ինստիտուտի Կովկասի բաժնի ղեկավար Վլադիմիր Եւսեեւ:

# Հայաստանում «Խոզի Գրիպից» Մահացել Է 7-րդ Հիւանդը

Յունուար 12-ի դրութեամբ Հայաստանում արձանագրուել է խոզի գրիպից մահացութեան արդեն 7-րդ դէպքը: Կինը երկու օր առաջ էր Թալինից «Էրեբունի» բժշկական կենտրոն տեղափոխուել: Այնտեղից «Ազատութեանը» փոխանցեցին, որ հիւանդը իրենց մօտ է բերուել ծայրայեղ ծանր վիճակում: 30-ն անց կինը մահացել է այսօր առաւօտեան, երբ մի քանի օրգան միաժամանակ սկսել են չգործել: Առողջապահութեան նախարարութեան հաղորդագրութեան մէջ նաեւ նշւում է, որ ախտորոշումը եւ այլ մանրամասներ կը ճշդուեն փորձաքննութեան արդիւնքում:

Երեկոյեան յայտնի դարձաւ, որ արձանագրուել է նաեւ քաղցկեղով հիւանդ, վիրահատուած երեխայի մահուան դէպք, որի մօտ միաժամանակ հաստատուել է գրիպի H1N1 ենթատեսակը:

Միաժամանակ Առողջապահութեան նախարարութիւնը տուեալներ են ներկայացւում հիւանդացութեան ցուցանիշների բարելաւման մասին. ըստ այդմ, նուազել է թոքաբորբով հիւանդների, յղի հիւանդների եւ վերակենդանացման բաժանմունքներում բուժուողների թիւը: Մարդկանց հոսքը, սակայն, չի դադարում հիւանդանոցներ, նաեւ խոզի գրիպով նոր վարակակիրներ են յայտնաբերւում:

«Մօտ 10 երեխաների մօտ H1N1-ի լաբորատոր արդիւնքները եկել են դրական: Կարելի է արդէն եզրակացութիւն անել, որ աւելի շատ մենք գործ ունենք H1N1 տիպի հետ»,- «Ազատութեանը» փոխանցեց «Սուրբ Աստուածամայր» բժշկական կենտրոնի փոխտնօրէն Ալլա Յարութիւնեանը:

«Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» բժշկական կենտրոնում այս պահին H1N1-ով վարակուած եւ ծանր վիճակում գտնուող երեք հիւանդ կայ: Հիւանդ ծննդկանին կեսարեան հատում է արուել, նրա վիճակը շարունակում է մնալ ծանր: Փոխտնօրէնը պնդում է՝ բոլոր անհրաժեշտ միջոցներն ունեն, «Տամիֆլյու» դեղամիջոցն էլ անվճար են տրամադրում:

«Եթէ հիւանդը ընդունուեց մեր մօտ, բացուեց հիւանդութեան նկարագիր, ինքը կարիք ունի «Տամիֆլյու»-ի, տալիս ենք, բայց եթէ փողոցից մէկը գայ, «Տամիֆլյու» ուզի, իհարկէ, մենք չենք տայ, որովհետեւ դեղամիջոցը գտնւում է հսկողութեան տակ, մենք պէտք է ներկայացնենք «Տամիֆլյու»-ի ծախսը»,- ասաց Գագիկ Մանուկեանը:

Մանուկեանի խօսքով՝ «Շտապ օգնութեան» մեքենաները շարունակ նոր հիւանդներ են բերում:

## ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԳԱՂՈՒԹԱՐԱՐ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ




**ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ**

*Համաշխարհային Ա. Պատերազմէն ետք, գաղութարար Ֆրանսան Լիբանանի վրայ իր իշխանութիւնը հաստատելով ստանձնեց ձեւաւորումը քրիստոնեայ Լիբանանի (1920), իսկ Համաշխարհային Բ. Պատերազմէն ետք ալ գաղութարար Անգլիան, իր Պալֆուրեան խոստումը կատարելով, ստանձնեց ձեւաւորումը հրեայ Պաղեստինի (1948): Եւ այդպէս ալ, Միջին Արեւելքի մնացեալ շրջաններուն մէջ գաղութատիրութիւնը իր վարձկաններն ու գործակիցները վարձատրեց՝ անոնց տալով իշխանութիւն երկիրներու վրայ, որոնք երբեք չդարձան հայրենիքներ այդ երկիրներու ժողովուրդներուն համար: Արդարեւ, չարունակ միջամուխ ըլլալու պատրաստ գաղութարար Արեւմուտքը իր ձեւաւորած Միջին Արեւելքի երկիրներու սահմաններուն մէջ զետեղեց գիրար մերժող եւ չընդունող ժողովրդային խմբակցութիւններ, որպէսզի ազգային մէկ յայտարարի տակ անոնք չկարենային միանալ ու միատարր դառնալ: «Բաժնէ՛ որ տիրես»-ին տեղ «խառնէ՛ որ շինես»-ը դարձաւ հնարքը գաղութատիրութեան, որ իր հին ու նոր դերակատարներով խառնէ՝ շինելու պատրուակով...:*

*Քրիստոնեայ Լիբանանն ու հրեայ Պաղեստինը իսլամական աշխարհի ովկիանոսին մէջ որպէս փոքրիկ կղզիներ հազարումէկ փոթորիկի ենթարկուեցան տարիներու ընթացքին: Առաջինը՝ քաղաքացիական պատերազմներու (1958 եւ 1975-1990) եւ անհաշտ կեանքի ցաւերով տառապեցաւ (եւ տակաւին կը տառապի), իսկ միւսը, անվտանգութեան ու ապահովութեան մտահոգութեամբ ինքզինք պատած, անվերջ պատերազմներ մղելով մեկուսացուեցաւ եւ բռնագրաւող ըլլալու ամօթով ճանչցուեցաւ: Լիբանան իր քրիստոնեայ-իսլամ գոյակցութիւնը ի զուր ուզեց օրինակ ծառայեցնել՝ արաբ-հրեայ գոյակցութեան մը կարելիութիւնը քարոզելով աշխարհին, մինչ Իսրայէլ, հարուածներ տեղացնելով պաղեստինցիներու գլխուն, մերժեց ամէն տեսակի գոյակցութիւն արաբին հետ:*

*Լիբանան, հակառակ իր բարեացակամ քարոզչութեան, քրիստոնեայ-իսլամ երկուութեան պատճառաւ դարձաւ Սուրիոյ եւ Իսրայէլի քաղաքական ու զինուորական գործողութիւններու խաղավայրն ու զոհը, հակադարձօրէն (vice versa) մերթ դառնալով գրաւեալ մէկուն կողմէ եւ մերթ ալ հարուածեալ միւսին կողմէ: Արաբական աշխարհի միակ քրիստոնեայ նախագահ ընտրող Լիբանանը դարձաւ խեղճ խամաճիկը իր դրացի երկիրներուն՝ Սուրիոյ եւ Իսրայէլի:*

*Անցեալ դարու քառասունական թուականներուն անկախութիւն ճանչցած Լիբանանը հազիւ պորտը կտրած էր Սուրիայէն, երբ յիսունական թուականներուն Արեւմուտքին ծառայող իր նախագահը զայն անջատել ու մեկուսացնել ուզեց արաբական աշխարհէն: Արաբական աշխարհի այն օրերու ազգայնական զօրաւոր հոսանքը, գլխաւորութեամբ Եգիպտոս-Սուրիա միացեալ հանրապետութեան նախագահ Կամալ Ապտըլ Նասըրի, Սուրիայէն հոսելով օգնութեան հասաւ Լիբանանի իսլամ եւ յառաջդիմական ուժերուն, պատճառ դառնալով որ ձեւով մը քրիստոնեաներու ծայրայեղ կողմին (Շամունական) բազուկը կտրուի եւ անոր չափաւոր կողմին (Շեհապական) իշխելու ընթացք տրուի: Եւ երբ վաթսունական թուականներուն Լիբանանի մէջ պաղեստինեան զինեալ ներկայութիւնը զգալիօրէն զօրացաւ շնորհիւ Սուրիոյ օգնութեան, ծայրայեղ քրիստոնեայ Լիբանանի նախապէս կտրուած բազուկը իսրայէլեան վիրաբուժութեամբ վերստին գործի անցաւ եւ եօթանասունական թուականներու կիսուն քրիստոնեայ ծայրայեղ եւ ցեղապաշտ լիբանանցիները հայրենիք «փրկելու» սրբազան առաքելութեամբ (mission) պատերազմ հռչակեցին երկրի իսլամ ու յառաջդիմական ուժերուն դէմ, որոնք կը զինակցէին պաղեստինեան զինեալ ուժերուն հետ: Տասնըհինգ տարի տեւող (1975-1990) այդ քաղաքացիական պատերազմի ընթացքին, Իսրայէլ Լիբանանի պարտադրեց իր ընտրած նախագահները (Պաշիր Ժըմայէլ եւ յետ անոր նահատակութեան իր եղբայրը՝ Ամին Ժըմայէլ) եւ Լիբանանի հետ դաշինք կնքելու անկարելիութեան առջեւ յուսահատ դառնալով՝ թողուց Լիբանանը Սուրիոյ, որուն բացարձակ տիրապետութեան տակ մնացող Լիբանանին պարտադրուեցան Սուրիոյ ենթակայ երկու նախագահներ՝ Էլիաս Հըրաուին (1989-1998) եւ Էմիլ Լահուտը (1998-2007): 2005 թուականի Ապրիլ ամսուն Սուրիան քշուեցաւ Լիբանանէն ի հետեւանք ներքին ժողովրդային մեծ ցոյցերու եւ միջազգային ճնշումներու, որպէս արդիւնք սիւննի վարչապետ Ռաֆիք Հարիրիի ահաբեկչութեան, որ կատարուեցաւ Փետրուար 14, 2005-ին:*

*Թէ ինչո՞ւ այսքա՛ն մանրամասնութեամբ պարզուեցաւ Լիբանանի ողբերգութիւնը իր դրացիներուն հետ. որովհետեւ արաբա-*

Շար.ը էջ 18

## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ
## ՍՈՒՐԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ

*Սուրիոյ երկարատեւ քաղաքացիական պատերազմին վերջ տալու նպատակով, քանի մը օր առաջ, կառավարութիւնը Դամասկոսի մէջ պաշտօնական յայտարարութիւն մը հրապարակելով յայտնեց թէ պատրաստ է այս ամսուան ընթացքին Ժընեւ երթալու եւ խաղաղութեան բանակցութիւններուն մասնակցելու: Սակայն նախապայման դրաւ իմանալու խօսակցութեանց մասնակցող ընդդիմադիրներու անուանացանկը:*

*Այս առնչութեամբ Սուրիոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ Մուսալլէմ, Դամասկոսի մէջ ՄԱԿի պատուիրակի հետ ունեցած հանդիպման ընթացքին նշեց որ կանխաւ կ՚ուզէ իմանալ թէ «ահաբեկչիներու խումբ»ը պիտի մասնակցի՞ այդ ժողովին:*

*Արդարեւ Ժընեւի խաղաղութեան ժողովը ծրագրուած էր անցեալ տարուան ընթացքին ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին կողմէ որ կը նպատակադրէ վերջ տալ հինգ տարիներէ ի վեր շարունակուող քաղաքացիական պատերազմին: Այս շրջանին զոհ գացած է շուրջ 260,000 հոգի եւ ստեղծած գաղթականներու ահուելի տագնապ մը թէ շրջանին եւ թէ Եւրոպայի մէջ:*

## ՍԷՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ ՑՆՑՈՒՄՆԵՐՈՒ ՄԷՋ

*Սէուտական Արաբիա նոր տարին կը թեւակոխէ նոր հարցերով, տագնապներով, որոնք սկսած են սրելով սրիլ ու անել կացութեան մատնել երկիրը: Ներքին հարցերէն գլխաւորներէն է շիիթ այլախոհներու դէմ շղթայազերծուած պայքարը, որ հետզհետէ աւելի սուր բնոյթ կը ստանայ, Հիւսիսէն իսլամական պետութեան պարագլուխ Ապու Պաքր Պաղտատին, ոխերիմ թշնամի կը համարուի քանի որ խոստացած է տապալել Սէուտական տոհմը, զայն նկատելով «Օձին Գլուխը»: Երկրի հարաւը սիւննիներով ղեկավարուող Սէուտական զօրքերը պատերազմի մէջ են Եմէնի շիիթ ապստամբներու դէմ, իսկ արեւելքէն շիիթներով ղեկավարուող Իրանն է:*

*Նոր տարուան օրը 47 այլախոհներու գլխատումը մեծ աղմուկ ստեղծեց համաշխարհային չափանիշով: Մահապարտները սիւննի ծայրայեղականներ էին մեծ մասամբ, որոնք զօրավիգ կը կանգնէին Ալ Քայիտային: Անոնցմէ չորսը միայն շիիթ էին, գլխաւորութեամբ շէյխ Նիմր Էլ Նիմր կրօնաւորին: Ան պահանջած էր Սէուտական Արաբիոյ արեւելեան շրջանի անջատումն ու ինքնավարութիւնը, քանի որ մեծ մասով շիիթներէ բնակուած էր: Շէյխին սպանութիւնը զանգուածային ցոյցերու դուռ բացաւ: Իսկ Իրանի հոգեւոր գերագոյն ղեկավար Այաթօլլահ Ալի Խէմէնին, առաջարկեց իսլամական պետութիւններուն խզել իրենց դիւանագիտական կապերը Սէուտական Արաբիոյ հետ: Սակայն քիչեր միայն ընդառաջեցին իր կոչին:*



# ԵՐԿԱԹԷ ՇԵՐԵՓԻ ԽՈՍՏՈՒՄԸ

*ԶԱՒԷՆ ԽԱՆՃԵԱՆ*

*Տարի մը եւս կը յանձնենք պատմութեան յորձանուտին: Իւրայատուկ տարի մը արդարեւ, Հարիւրամեակ՝ ցեղասպանութեան: Վիշտի եւ հրաշքի յուշարար տարի մը: Վիշտ եւ հրաշք քրքրող տարի մը: Եւ արդարօրէն, Թէքէեանի օրինակով, ոչ միայն կարելի է այլ նաեւ անհրաժեշտ որ հաւաքաբար հարց տանք:*

*Հաշուեյարդար. Ին՞չ մնաց, հարիւրամեակէն մեզի ին՞չ մնաց:*

*Յետադարձ ակնարկ մը բաւարար է հաստատելու թէ տքնաջան եւ նուիրական համագաղութային աշխատանքի մը ականատես եղանք ամենուրեք եւ անարդար չէ յաւակնիլ թէ ազգովին նուաճեցինք փոքր յաղթանակներ եւ խլեցինք շարք մը դափնեպսակներ: Հարիւրամեակը, մեր ազգային պայքարը բարձրացուց համաշխարհային գիտակցութեան, յարգանքի եւ ճանաչողութեան յարաբերական աննախընթաց բարձրաւանդակի մը, որ արժանի էր հարցի էութեան եւ լրջութեան եւ ազդու իր տարողութեամբ:*

*Դժուար եւ անխուսափելի հարցումը սակայն կը ցցուի մեր դիմաց: Հիմա ին՞չ:*

*Ճանապարհը երկար է եւ փշոտ: Արգելքներն ու խոչընդոտները անպակաս: Կը թուի սակայն թէ մեր հաւաքական կամքը անկոտրում է եւ վճռակամութիւնը հաստատ: Մեր անսասան հաւատքը մեր արդար դատի պայքարի ճանապարհին կը շարունակէ մնալ անխախտ: Հաւատքը՝ կը շարունակէ մնալ արդարութեան ձգտումին եւ ճշմարտութեան բացարձակ ճառագայթումի մեր ապաւէնը: Չենք կրնար սակայն ձեռնածալ մնալ եւ մի քանի յաղթանակներու գինովութեամբ հարբիլ: Պայքարը շարունակել է պէտք: Անդադրում:*

*Արդարութեան եւ հատուցումի ճանապարհին վրայ, մեր երազներու եւ պահանջքներու ովկիանոսին մէջ, լուրջ եւ գիտակից իրատեսութեան անհրաժեշտութիւնը կայ: Հակառակ կորուած մղոններուն եւ տարուած յաղթանակներուն շատ հեռու ենք տակաւին երկաթէ շերեփի իւրացումէն եւ պայքարի ճանապարհին անոր գործածութեան կիրարկումէն: Ցեղասպանութիւնը եւ անոր հոգեբանական բոլոր ազդեցութիւնները մեր սերունդի ազգային եւ հաւաքական էութեան մէկ մասնիկն են: Զայն կը շնչենք եւ կապրինք ամէն օր, որ Աստուած կը շարունակէ կեանք շնորհել մեզի: Այստեղ արդէն, մենք արթնութեան կարօտը եւ պարտադրանքը ունինք եւ անոր ճնշումը կը զգանք:*

*Ժամանակներու եւ պայմաններու հրամայականի տակ մեր առաջադրանքները, մեր կեդրոնացումները եւ առաջնահերթութիւնները յարափոփոխ ըլլալու կարօտ եւ արժանի են: Ցեղասպանութեան հոգեբանութիւնը չի կրնար մեր հաւաքական կեանքի շուրջօրեայ առանցքը ըլլալ եւ պէտք չէ ըլլայ: Եւ մինչեւ այն օրը երբ երկրագունդի վրայ գտնուող հայկական հաւաքականութիւնը տիրանայ երկաթէ շերեփին, մեր ուշադրութիւնը հարկ է կեդրոնացնել հետեւեալ երեք անյետաձգելի իրավիճակներուն կամ իրականութիւններուն վրայ եւ տալ անոնցմէ ամէն մէկուն մեր էութիւնէն իր արժանի բաժինը:*

### *Ա. ՀԱՅՐԵՆԻՔ*

*2016 ին մեր հայրենիքը կը բոլորէ իր անկախութեան քսանհինգ ամեակը: Հակառակ բոլոր յառաջդիմութեան, հակառակ բոլոր մարդկային եւ նիւթական զոհողութիւններուն, հակառակ բոլոր երազներուն եւ տեսիլքին, այսօր մեր հայրենիքը հոն չէ ուր մենք հաւաքաբար կուզէինք որ ըլլար: Կասկած չկայ թէ Արցախեան ազատագրական պայքարը եւ պատմական յաղթանակը, դարերէ իվեր մեզի գլացուած եւ միայն երազուած հպարտութիւն առթող իրականութիւնն է: Փառք եւ պատիւ Արցախեան հերոսամարտը իրենց արիւնով եւ կեանքով կերտած բոլոր ազատամարտիկներուն: Հոն իսկ սակայն տակաւին խարխուած չէ յաղթանակը եւ թշնամին ամէն օր իր վայրագ թափանցումներով նոր կեանք կը հնձէ ճակատներու վրայ:*

*Ընկերային եւ տնտեսական ապահովութիւնը անբաւարար մակարդակի վրայ է իսկ արդարութեան նշաձողը անընդունելիօրէն ցած: Հայաթափումը կը շարունակուի իսկ «դէպի երկիր» լոզունգը կը մնայ անլսելիօրէն ղօղանջելի:*

*Հայրենիքը տակաւին հեռու կը մնայ ինքնաբաւ, ինքնանկախ, եւ աճող ըլլալէ: Այս կացութեան մէջ գտնուող հայրենիքը անտարակոյս կը կարօտի մեր բոլորի լուսարձակին տակ ըլլալու անհրաժեշտութեան: Բոլորս պատասխանատու ենք այս վիճակին եւ բոլորիս պատասխանատուութիւնն է ամէն գնով տքնիլ եւ ճգնիլ այս վիճակէն դուրս գալու համար:*

*Հայրենիքը եւ մեր հայրենի ժողովուրդը կը մնան մեր ուշադրութեան եւ հոգածութեան առաջնահերթութեան գագաթին:*

### *Բ. ՍՓԻՒՌՔ*

*Դարաւոր պատմութեան ճնշող վայրագ պայմաններու ծնունդ հայկական Սփիւռքը՝ անհայրենիք մասնիկն է աշխարհով տարտղնուած հայ ժողովուրդին: Ցեղասպանութենէն ետք հսկայածաւալօրէն տարածուած հայ Սփիւռքը, հայրենիքի անկախութենէն ետք կ՚ակնկալուէր նօսրանալ եւ փոքրանալ: Դժբախտ իրականութիւնը սակայն հակառակը ապացուցեց եւ Սփիւռքը հայրենիքի հաշւոյն .....ուռճացաւ: Պատճառներու ուսումնասիրութեան տեղը չէ այստեղ: Կը բաւէ գիտակցիլ իրականութեան եւ անդրադառնալ հսկայածաւալ Սփիւռքի կարեւորութեան, թէ ազգապահպանման եւ գոյատեւումի ոլորտին մէջ եւ թէ հայրենիքի օժանդակութեան սրբազան պարտաւորութեան ծիրէն ներս:*

*Առ այդ բնական եզրակացութիւն է ուրեմն թէ պարտաւորիչ է ունենալ առողջ Սփիւռք մը: Այսօրուայ իրականութեան ցոլացումը սակայն տարբեր բան ցոյց կու տայ:*

*Տասնամեակներէ իվեր հայրենամերձ ազգային ամենաբեղուն աշխատանք տանող, կենսունակ եւ գործունեայ, մշակութային փեթակ հանդիսացող Միջին Արեւելեան գաղութները կը շարունակուին քայքայուիլ: Սուրիական հայրենիքի Մայր գաղութը վերջին զոհն է այս ողբալի իրականութեան: Կուրութիւն եւ կարճատեսութիւն է չանդրադառնալ այս իրականութեան եւ ափսոսանքով պէտք է հաստատել թէ մեր ազգային ղեկավարութեան գագաթին բազմած շատեր գիտակցութեան այդ խաբկանքը կ՚ապրին:*

*Սփիւռքի պարագային, թէեւ մենք պատասխանատու չենք քաղաքական եւ պատերազմական այն վիճակին եւ սակայն բոլորիս հաւաքական պատասխանատուութիւնն է ամէն գնով տքնիլ եւ ճգնիլ փրկելու համար ամէն հրկիզուող սփիւռքահայ գաղութ յօգուտ Սփիւռքի եւ հայրենիքի:*

*Սփիւռքը եւ Սփիւռքահայը նաեւ հարկ է որ մնան մեր ուշադրութեան եւ հոգածութեան գագաթին, հայրենիքի կողքին:*

### *Գ. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ*

*Իսկ այստեղ արդէն կը միանան Սփիւռքն ու հայրենիքը:*

*Ցեղասպանութեան հարիւրամեակի վերջին օրերը կ՚ապրինք: Բայց պէտք է հպարտութեամբ եւ խորին գոհունակութեամբ արտայայտուիլ թէ հարիւրամեակը եկաւ հաստատել մեր անսասան վստահութիւնը երիտասարդ նոր սերունդին վրայ, որոնք ազգին ճակատը բարձր պահեցին իրենց հետաքրքրութիւններով, նուաճումներով, ստեղծագործութեամբ, ազգային գիտակցութեան եւ պատասխանատուութեան ոգիով: Մտային սեւեռում մը երկրագունդի շուրջ կու գայ պատկերացնելու թէ երբեք մեր ազգային պատմութեան ընթացքին չէ եղած այնպիսի ժամանակ մը, երբ մենք ունեցած ըլլանք այսօրուայ խոստումին նման բանակ մը համալսարանական կամ համալսարանաւարտ սերունդ, որոնք պիտի կազմեն գիտնականներու, մասնագէտներու, կրթական եւ հանրային գործիչներու, իրաւաբաններու եւ օրէնսդիրներու, գիտութեան եւ արուեստի բնագաւառներու մէջ փայլող խոստմնալից աստղերու ապագայ գումարտակներ:*

*Մեր հաւաքական պարտականութիւնն է փայփայել եւ գուրգուրալ այս եւ յաջորդող սերունդներուն վրայ, օրինակելի առաջնորդութեամբ, որոնք՝ «եւ հաւատայ, կրանիթեայ ո՜վ աստուած» օր մը պիտի դառնան երկաթէ մեր շերեփները:*

*Ահաւա՛սիկ հարիւրամեակէն ինծի մնացած կտակը:*

*Հաւատա՛նք:*

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
• Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability
• Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning
• Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
New York Life · Anthem · BlueShield · Aetna · Health Net · CIGNA · Kaiser Permanente
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.B.A. INSURANCE SERVICES
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.

# ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՇՈՒԵԴԻԱՆ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

## ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՎԱՆԵՑԻ ՄՈՒՐԱԴ ԱՐԹԻՆԻ ՀԵՏ

*ԱԻԴԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ*



*Շուեդահայ Մուրադ Արթինը Շուեդիայի խորհրդարանի առաջին պատգամաւորն էր, որը հանդէս է եկել հայերի, ասորիների եւ արամեացիների՝ 1915 թուականի ցեղասպանութեան ճանաչման մի շարք նախաձեռնութիւններով: Նա նաեւ հանդէս է եկել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ յայտարարութիւնների նախաձեռնութեամբ:*

*NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում Մուրադ Արթինը խօսել է իր արմատների, Շուեդիա տեղափոխուելու, ծաւալած քաղաքական գործունէութեան մասին:*

*Պարոն Արթին, պատմէք Ձեր հայկական արմատների մասին, որտեղի՞ց են Ձեր ծնողները:*

*Հայրս Արեւմտեան Հայաստանի Վան քաղաքից է, իսկ մօրս նախնիները Տիարպեքիրից են: Ցեղասպանութեան տարիներին նրանք գաղթել են Իրաք, որտեղ էլ ծնուել են իմ ծնողները: Հայրս Պասրայում է ծնուել, մայրս՝ Պաքուբայում: Ինքս էլ եմ Իրաքում ծնուել, բայց կարելի է ասել՝ վանեցի եմ:*

*Արդէն 30 տարուց աւելի է՝ Շուեդիայում էք բնակւում, ինչո՞ւ էք տեղափոխուել:*

*Իրաքից արտագաղթել եմ 1980թ.-ին, քանի որ իմ քաղաքական հայեացքները չէին ընդունւում իրաքեան ռեժիմի կողմից: Ես պայքարում էի յանուն ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների, ունէի «ձախ արժէքներ եւ գաղափարախօսութիւն»: Իրաքից մեկնելուց յետոյ ճամբորդել եմ եւրոպական տարբեր երկրներով, մինչեւ հասայ Լեհաստան, որտեղ ունէի ընկերներ, որոնց մօտ կարող էի բնակուել: Լեհաստանում ճարտարապետութիւն էի սովորում, սակայն Իրաքի ոստիկանութիւնը շարունակում էր ինձ հետապնդել, եւ ես ստիպուած կիսատ թողեցի ուսումս եւ մեկնեցի Շուեդիա: Հենց այստեղ էլ ես նոր կեանք սկսեցի եւ այլեւս հետ չեմ նայել:*

*Շուեդիայում ինչպէ՞ս ճարտարապետ Մուրադ Արթինը դարձաւ քաղաքական գործիչ:*

*Միշտ էլ ակտիւ եմ եղել քաղաքականութեան մէջ, նոյնիսկ երիտասարդ տարիներս, երբ Իրաքում տեսնում էի անարդարութիւն, պայքարում էի դրա դէմ: Բռնապետական երկրից տեղափոխուելով աւտորիտար, ապա ժողովրդավարական Շուեդիա, որտեղ կարող ես օգտագործել քո ժողովրդավարական, քաղաքական ու սեփական իրաւունքները, ես ոգեւորուեցի եւ շարունակեցի իմ քաղաքական գործունէութիւնը:*

*Շուեդիայի խորհրդարանի պատգամաւոր էք եղել: Ձեր կարծիքով, ո՞րն է եղել Ձեր կարեւորագոյն նախաձեռնութիւնը խորհրդարանում:*

*Շուեդիա տեղափոխուելուց յետոյ 12 տարի աշխատել եմ միգրանտների գծով խորհրդատու եւ աշխատանքի տեղաւորման գործակալ: Այնուհետեւ 1998թ.-ին ընտրուել եմ Շուեդիայի խորհրդարանի պատգամաւոր եւ Արտաքին յարաբերութիւնների յանձնաժողովի անդամ: Իմ քաղաքական թեմաները միջազգային են եղել, օրինակ, մարդու իրաւունքներ, արտաքին առեւտուր եւ ՄԱԿ: Ինձ համար ամենակարեւորն այն էր, որ Շուեդիայի խորհրդարանը ճանաչէր Հայոց ցեղասպանութիւնը: 1999թ.-ին ես առաջին զեկոյցով հանդէս եկայ, որում առաջարկում էի ճանաչել հայերի ցեղասպանութիւնը: Խորհրդարանը զեկոյցով հանդէս եկաւ 2000թ.-ին: Այդ ոլորտում որոշակի հետազօտութիւն կատարելուց յետոյ հասկացայ, որ Օսմանեան Կայսրութեան կողմից այդ տարիներին այլ ազգեր նոյնպէս տուժել են, առաջարկեցի, որ Շուեդիան դրանց վերաբերեալ էլ զեկոյցներով հանդէս գայ: Ես ուզում էի, որ ճանաչէինք յոյների, ասորիներ եւ արամեացիների ցեղասպանութիւնները, սակայն խորհրդարանը մերժեց: Միայն 2010թ-ին Շուեդիան ճանաչեց Հայոց ցեղասպանութիւնը, այս բանաձեւում ներառուել էին նաեւ վերոնշեալ ազգերը: Սրանով ես ամենաշատն եմ հպարտանում, սակայն ինձ համար կարեւոր է նաեւ Թուրքիայում ազգային փոքրամասնութիւնների իրաւունքների պահպանմանն ուղղուած պայքարը:*

*Պարոն Արթին, առաջինն էիք Շուեդիայում, որ խօսեցիք Հայոց ցեղասպանութեան մասին: Ցեղասպանութեան 100-րդ տարելիցից յետոյ ի՞նչ քայլեր պէտք է ձեռնարկել:*

*Շատ կարեւոր է, որ միւս երկրներն էլ ճանաչեն Հայոց ցեղասպանութիւնը եւ ԵՄ-ի եւ ՄԱԿի միջոցով ստիպեն Թուրքիային ճանաչել Ցեղասպանութիւնը: Նաեւ կարեւոր է, որ զոհերի ժառանգներն ու վերապրածները Թուրքիայից ստանան փոխհատուցում՝ իրենց ապրած ցաւի եւ տարածքները կորցնելու համար: Առաջ շարժուելու միակ ճանապարհը սա է:*

*Հայերի համար կարեւորագոյն հարցերից մէկն էլ Ղարաբաղեան կոնֆլիկտն է:*

*Ղարաբաղեան հարցի մասին ես Շուեդիայի խորհրդարանում տարբեր զեկոյցներով եմ հանդէս եկել: Մենք պէտք է այս հարցը լուծենք խաղաղ ճանապարհով, երբ Ղարաբաղը Հայաստանի մասը կը կազմի, կամ էլ միջազգային հանրութիւնը կը ճանաչի Ղարաբաղը՝ որպէս անկախ պետութիւն:*

*2002թ.-ից այլեւս պատգամաւոր չէք: Ինչո՞վ էք այժմ զբաղւում:*

*Ես Օրեբրոյի քաղաքապետարանի անդամ եմ, Ձախ կուսակցութեան ղեկավարը քաղաքապետարանում: Այժմ զբաղւում եմ քաղաքի խնդիրներով, օրինակ, սոցիալական ապահովութիւն, քաղաքապետարանի պիւտճէ, աշխատանքի տեղաւորում:*

# ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՏԽՈՒՐ ՏԱՐԻ ԷՐ ՄԱՐԴԻԿ ՍԱՐՍԱՓՈՎ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ 2016Թ.-ԻՆ.

## ԱՄՓՈՓՈՒՄ Է «ԱԿՕՍ»-Ի ԽՄԲԱԳԻՐԸ

*Թուրքիայի համար 2015թ.-ն տխուր տարի էր, մարդիկ կորցրել են լաւատեսութիւնն ու սարսափով են սպասում 2016թ.-ին: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նման կարծիք յայտնեց Ստամպուլում լոյս տեսնող հայկական «Ակօս» թերթի հայկական էջի խմբագիր Բագրատ Էստուկեանը՝ ամփոփելով նախորդ տարին:*

*Պարոն Էստուկեան, Թուրքիայում նախորդ տարի լի էր իրադարձութիւններով՝ խորհրդարանական ընտրութիւններ, թուրք-քրդական եւ թուրք-ռուսական լարուած յարաբերութիւններ: Ձեր կարծիքով, ինչպիսի՞ն էր տարին Թուրքիայի հասարակութեան եւ իշխանութիւնների համար:*

*2015թ.-ն Թուրքիայի համար տխուր տարի էր, քանի որ աւարտուեց պատերազմով: Երկրի արեւելեան հատուածում շատ քաղաքներ պաշարման մէջ են, բանակը տանկերով շրջում է փողոցներում եւ աջ ու ձախ կրակում: Կարելի է ասել՝ քաղաքացիական պատերազմ է ընթանում Թուրքիայում, ինչքան էլ որ այդ մասին չեն հրապարակում, բայց սա է փաստը: Երկիրը ժողովրդավարութիւնից հեռացել է եւ մտնուել է մենատիրութեան եւ բռնապետութեան: Ըստ իս, 2015թ.-ն տխուր տարեթիւ է, որը մարդիկ դեռ երկար կը յիշեն:*

*Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների բարելաւման համար հենց ժողովրդավարութիւն է անհրաժեշտ: Հետեւաբար, ներկայիս իրավիճակում արտաքին յարաբերութիւնների ոչ թէ բարելաւում, այլ սրացում է սպասւում:*

*Թուրքիայի հասարակութիւնը դեռ երկար նաեւ Ռուսաստանի հետ վատ յարաբերութիւնները կը յիշի, քանի որ ռուսական ինքնաթիռի խոցումը ճգնաժամ առաջացրեց: Երկու երկրներն էլ իրենց զբօսաշրջիկներին յորդորել են չայցելել հակառակորդ երկիր: Թուրքիան իր հերթին տարբեր ապրանքներ էր արտահանում Ռուսաստան, գազ էր ստանում այդ երկրից, եւ այժմ այս ամենը հարցականի տակ են: Բացի դրանից, Ռուսաստանը շատ կարեւոր ներդրումներ ունէր Թուրքիայում, օրինակ, ատոմակայանը: Սա էլ է կարծես ձախողուած:*

*Այս ամբողջը նաեւ Հայաստանի հետ է առնչւում, քանի որ առեւտրային յարաբերութիւնների մէջ է Ռուսաստանի հետ, Հայաստանի սահմանները պաշտպանում է ռուսական բանակը: Հետեւաբար, եթէ յարձակում լինի, առաջին կէտը հենց հայկական հողերը կը լինեն:*

*Շար.ը էջ 18*




Յունուար 17-ի ներկայացումը կը հովանաւորէ
Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը
Տոմսերու համար հեռաձայնել 626-422-9121 թիւին

## ՅՈՎՍԷՓԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ԲԵՐԿՐԱԼԻ ՁԱՅՆԵՐԸ՝ KCRW-Ի ԱՐԽԻՒՆԵՐՈՒՆ ՄԷՋ



*Վերջերս, Յովսէփեան Վարժարանի տնօրէնութիւնը որոշեց խաղավայրին մէջ՝ գբօսանքին ժամանակ, աշակերտներուն ստեղծած աղմուկը արձանագրել, զայն արխիւներու մէջ պահելու համար: Տնօրէնը՝ Պրն. Շահէ Մանկրեան, որ Ազգային Հանրային Ձայնասփիւռին դրօշակակիր՝ KCRW (89.9 FM) կայանին հաւատարիմ ունկնդիր մըն է, լսած էր իւրայատուկ ծրագիրի մը մասին, որ առիթը կու տար արձանագրելու Լոս Անճըլըսի հետաքրքրական ձայները եւ բացատրողականով մը զայն ղրկելու ձայնասփիւռի կայանին: Morning Editionի՝ Լոս Անճելըսի Ձայները ենթախորագրեալ յայտագրին լրագրողները իրենց ունկնդիրները կը քաջալերեն արձանագրելու եւ ներկայացնելու առօրեայ կեանքի ընթացքին լսուած ձայները, հետեւեալ նշանաբանին տակ.- «Քու քաղաքդ է: Ի՞նչ կը լսես»: Ուրեմն, Պրն. Մանկրեան խորհած է. «Ո՛չ ոք պէտք է կորսնցնէ այս գեղեցիկ առիթը»:*

*Սկզբունքով, Լոս Անճըլըսի Ձայները՝ յայտագիր մըն է լսողական բացիկներու Լոս Անճըլըսի մէջ եւ շուրջ գտնուող ձայներուն: 15էն 30 երկվայրկեան տեւողութիւն ունեցող այս ձայներէն ետք կը ներկայացուին պատմութիւնները այդ ձայները պատկանող անձերուն կամ վայրերուն:*

*Օգտագործելով բջջային հեռաձայնը, Պրն. Մանկրեան ներկայացուց իր նախասիրած ձայներէն մէկը, դպրոցին խաղավայրին մէջ՝ հայ աշակերտներուն հանած «աղմուկը»՝ անոնց առաւօտեան գբօսանքին ընթացքին: Ան ներկայացուց արձանագրած «աղմուկը» հետեւեալ բացատրականով.-*

*Բազմալեզու Աշակերտներ Զբօսանքի Ընթացքին.- Բոլոր դպրոցներուն գբօսանքները կախարդականօրէն նոյնանման են. գրեթէ: Մանուկներուն արտադրած բազմատեսակ աղմուկը՝ տարբեր ձայնաստիճաններով, ճիշդ երգահանդէսէ մը առաջ ձայներու ներդաշնակութեան հասնելու նպատակով հանուած աղմուկին նման է: Այս կախարդական աղմուկը կը լսեմ ամէն աււօտ, շաբաթը հինգ օրերու ընթացքին, օրական 20 վայրկեան: Այս աշակերտները կը հիւսեն իրենց երկլեզու ձայները՝ հայերէնն ու անգլերէնը, գեղեցիկ երկլեզու զուգերգի մը նման, Ամերիկայի խճանկարին նման, անսպասելի զանգին նման որ բնաւ չ՛աւարտեր մեր խօսակցութիւնը: Ոմանք մեր վարժարանին ձայները մանրաշխարհ կը կոչեն, իսկ ես գերազանց ուրախութիւն պատճառող վիճակ կը կոչեմ զայն:*

*Տնօրէնութեան տեսակէտով, մեր աշակերտներուն ձայները արձանագրելով ներկայացուցած կ՛ըլլանք մեր հայկական վարժարանի կեանքին փոքրագոյն մասնիկը: Այս զուտ 30 երկվայրկեան բերկրալի աղմուկը պիտի պահպանուի նման համբաւաւոր ձայնասփիւռի արխիւներուն մէջ, յառաջիկայ սերունդներուն կողմէն օգտագործուելու համար: Ծափոնական հայքուի նման, երբեմն լաւ բաները փոքրիկ ծրարներով կ՛ըլլան:*

*Հաճեցէք այցելել Լոս Անճելըսի Ձայներու կայքէջը լսելու համար մեր աշակերտներուն հանած աղմուկը եւ Պրն. Մանկրեանին խօսքերը:* http://www.kcrw.com/news-culture/soundsla#!f1106

## ՇՈՒՇԻ ՊԱՐԱԽՈՒՄԲԻ ԵԼՈՅԹԸ

*Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ Արեւմտեան Ամերիկայի Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի հովանաւորութեամբ, Թէքէեան Մշակութային Միութեան Կլէնտէյլ-Փասատինա Մասնաճիւղը մեծ թափով կը պատրաստուի ներկայացնել Նիւ Եորքի Սբ. Վարդան եկեղեցւոյ Շուշի Պարախումբը:*

*Շուշի Պարախումբը՝ Ցեղասպանութեան նուիրուած իր յաղթական ելոյթներէն ետք Մոսկուայի, Ս. Փիթըրսպուրկի, Երեւանի, Ստեփանակերտի եւ Նիւ Եորքի մէջ, կու գայ Լոս Անճելըս: Արդարեւ անոնց ելոյթը տեղի պիտի ունենայ Կիրակի, 10 Ապրիլ, 2016-ի երեկոյեան ժամը 4:00-ին, Կլէնտէյլ Երկրորդական վարժարանի հանդասասրահին մէջ:*

*Աւելի քան 60 պարմանուհիներէ բաղկացած այս խումբին պարուսոյցն ու գեղարուեստական ղեկավարն է Սեդա Փասքալեան-Քանթարճեանը, իսկ երաժշտական ղեկավարն է Անդրանիկ Մուրատեանը:*

*Իրենց ելոյթներով խումբին պիտի մասնակցին յայտնի երգիչներ Լէյլա Սարիբէկեան եւ Անտրէ՝ Հայաստանէն, Յասմիկ Մէյխանաճեան եւ Անահիտ Զաքարեան՝ Նիւ Եորքէն, ինչպէս նաեւ Սալբի Մայիլեան, Արմէն Յովհաննէսեան եւ Ռուբէն Թելունց՝ Լոս Անճելըսէն: Իսկ օրուայ պատուոյ հիւրը պիտի ըլլայ նշանաւոր յօրինող Արա Գէորգեանը:*

*Տոմսերու գիներն են $100, 80, 60, 40 եւ 25, իսկ ստանալու համար կարելի է դիմել Սիրանին (626)827-1952, Աստղիկին (626)355-3897, կամ Ալիսին (818)606-6606:*

## Հ.Բ.Ը.Մ.-Ի ՄԱՆՈՒԿԵԱՆ-ՏԵՄԻՐՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ 40-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

*Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանը այս տարի կը բոլորէ իր 40-րդ դպրոցական տարեշրջանը, շարունակելով ուսումնական-դաստիարակչական իր փայլուն գործունէութիւնը իբր առաջնակարգ կրթական հաստատութիւն, նոր իրագործումներու եւ ձեռքբերումներու լայն հեռանկարներով եւ ծրագիրներով:*

*Վարժարանին 40-ամեայ պատմութիւնը եւ նուաճումները, սկսեալ 1976-ին Վէն Նայսի Ս. Պետրոս Եկեղեցւոյ կողքին իր հիմնադրութենէն մինչեւ Քանոկա Փարքի այսօրուան իր ընդարձակ համալիրը, խօսուն փաստերն են ուսումնական բարձրորակ կրթութեան կողքին, սփիւռքի մէջ հայապահպանումի եւ հայեցի դաստիարակութեան ուղղութեամբ անոր կատարած երախտաշատ եւ արդիւնաւոր աշխատանքին:*

*Նախամանկապարտէզի գուրգուրոտ մթնոլորտէն մինչեւ երկրորդական՝ լաւագոյն համալսարաններ մուտքի հանգրուանը, բազմաթիւ սերունդներու դաստիարակութիւնը դպրոցէն ներս կարելի դարձած է նուիրեալ ուսուցիչներու եւ տնօրէնութեան կողքին, Միութենական առաջնորդ անհատներու եւ բարերարներու տեսիլքին, առատաձեռն նուիրաբերումին ու արի նախաձեռնութիւններուն, ինչպէս նաեւ հոգաբարձական կազմերու հաւատաւոր եւ հետեւողական ճիգերուն շնորհիւ:*

*Հետեւաբար, Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի 40-ամեակին զուգահեռ, յոբելինական այս տարին կը յատկանշուի նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ազգանուէր գործունէութեան 110-րդ տարեդարձով եւ դպրոցի հոգաբարձական կազմի ատենապետ եւ Հ.Բ.Ը.Մ.-ի փոխ-նախագահ Պրն. Սինան Սինանեանի անխոնջ, ձեռներէց եւ դպրոցանուէր գործունէութեան քանի մը տասնամեակներու վաստակով: Այս բարեպատեհ առիթով, ինչպէս նաեւ առ ի գնահատանք երկար տարիներու իր օրինակելի ծառայութիւններուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Պրն. Սինանեանը պիտի պատուէ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» հեղինակաւոր շքանշանով:*

*Վարժարանի շրջանակը եւ Ծնող-Ուսուցչական Մարմինը, բազմաթիւ միջոցառումներով պիտի նշեն վարժարանի անցեալ փառաւոր ուղին, համայնքէն ներս ընդարձակելով դպրոցի դերին եւ ապագայի հեռանկարներուն նկատմամբ ծանօթացման աշխատանքը: Գործունէութիւններէն գլխաւորը պիտի հանդիսանայ անկասկած՝ Պեւըրլի Հիլզի »Հիլթըն« հիւրանոցի շքեղ սրահին մէջ կայանալիք յոբելինական ճաշկերոյթ-տօնակատարութիւնը, որուն մասնակցելու համար Լոս Անճելըս պիտի ժամանեն Հ.Բ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներ, գլխաւորութեամբ Միութեան Նախագահ Պրն. Պերճ Սեդրակեանի:*

*Համոզուած ենք, որ Հ.Բ.Ը.Մ.-ի Մանուկեան-Տեմիրճեան Վարժարանի 40-ամեակը, կրթական իրագործումներու եւ յաջողութիւններու նոր հանգրուանի մը սկիզբը պիտի հանդիսանայ՝ հաւատքով եւ հաստատակամ շարունակելու համար անոր փայլուն ընթացքը դէպի յետագայ բազմաթիւ տասնամեակներ:*



# Massis Weekly

**Volume 36, No. 1** **Saturday, January 16, 2016**

## Russian Church Clarifies Position on Armenian Genocide



MOSCOW -- Position of the Russian Church towards the Armenian Genocide is not changed spokesman of Patriarch Kirill of Moscow and All Russia Deacon Alexander Volkov said in a statement to the Armenian media.

“The position of our Church on the Armenian genocide has been repeatedly and clearly expressed in numerous statements and messages of the Patriarch,” added Volkov. He pointed out that high-level Russian Orthodox clerics took part in last year’s events in Armenia that marked the centennial of the Armenian genocide.

“In an interview for “Rossiya” TV channel Patriarch Kirill spoke about the terrible and unprecedented situation of the Christians in Syria and Iraq. In that context, he brought the example of the history of the Ottoman Empire, where there were periods that the imposed order ensured relative security and stability in the lives of religious minorities.

Volkov insisted that the Patriarch alluded to only some periods of Ottoman history that saw “relative security and stability in the lives of religious minorities.” “The absence of such order -- both in the Ottoman Empire 100 years ago and in contemporary Iraq, Syria and Libya -- always leads to tragic events,” he said.

## Grigor Hovhannisyan Appointed Armenia’s Ambassador to the USA



YEREVAN -- By the decree issued by the President of the Republic of Armenia Serzh Sarkisian on January 12, Grigor Hovhannisyan has been appointed to the post of Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia to the United States of America in Washington, DC.

Hovhannisyan replaces outgoing ambassador and former PM Tigran Sargsyan who will chair the Board of the Eurasian Economic Commission, the executive body of the Eurasian Economic Union. He will succeed Victor Khristenko and will assume the post from February 1, 2016.

By the same decree Hovhannisyan was removed from the post of Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia to the United Mexican States, Republic of Cuba, Republic of Costa Rica, Republic of Guatemala and Republic of Panama by another presidential decree.

## First Casualty of 2016: Armenian Soldier Killed by Azeri Forces in Karabakh



YEREVAN (Armenianow) -- In what marked the first casualty of the year after a period of relative New Year calm in the Karabakh conflict zone, an Armenian soldier was reportedly killed by Azeri troops at the frontlines over the weekend.

The Nagorno-Karabakh Defense Ministry said 19-year-old Aramais Voskanyan was fatally wounded on Saturday while on duty in the eastern direction of the line of contact with Azerbaijan.

According to the Nagorno-Karabakh Defense Army, in the period of January 3-9, the Azerbaijani side fired more than 4,000 shots from guns of different calibers.

“The advanced units of the Defense Army mostly refrained from retaliatory actions and continued to confidently carry out their combat duty,” the Nagorno-Karabakh Defense Ministry said.

More than four dozen Armenian servicemen were killed in 2015 around Nagorno-Karabakh and at the restive Armenian-Azerbaijani border as Azeri forces began using larger-caliber and heavier weapons, including mortars and battle tanks.

At one point in December, Armenia’s Defense Ministry said the 1994 ceasefire agreement was effectively in tatters, while Nagorno-Karabakh’s Defense Minister Levon Mnatsakanyan accused Azerbaijan of “bringing the situation closer to war”.

## Swine Flu Death Toll Rises in Armenia



YEREVAN -- An outbreak of swine flu, which struck Armenia late last month, is under control, the Ministry of Health insisted on Monday after the H1N1 virus killed seven people in the country.

The ministry also continued to downplay an upsurge in other, less severe acute respiratory diseases that has led to the hospitalization of more than 650 Armenians, most of them children, since the start of the New Year.

Ministry officials said 83 of them remain in intensive care. Ten of them are in a severe condition, officials said without elaborating. It was not clear whether they are suffering from swine flu.

According to a spokeswoman for Health Minister Armen Muradian, there were 89 officially registered swine flu cases in the country as of Friday. Two more people died from the dangerous virus over the weekend, raising the H1N1 death toll to 6.

“There is no epidemic in the country,” the Ministry of Health said in a statement issued on Monday. “Analyses conducted by a rapid reaction group formed by the ministry show that the overall number of cases is virtually unchanged as of now,” it said.

“We are continuing to take preventive measures,” added the statement. “Hospitals and policlinics have been provided with necessary medication and materials.”

Acting on Muradian’s recommendation, Education Minister Armen Ashotian announced late last week that winter school holidays in Armenia have been extended by one week, until January 18.

Hospitals across the country have struggled over the past week to cope with a continuing inflow of patients suffering from flu, pneumonia and other acute respiratory diseases.

The Arabkir Medical Center, a children’s hospital in Yerevan, was packed with infected children, unable to receive more patients.

“We were hospitalized with usual flu symptoms: runny nose, fever, weakness, coughing. But it emerged later that it’s pneumonia,” said another mother.

The mass hospitalizations appear to have raised fears among many Armenians. Taguhi Stepanian, the head of Yerevan’s public ambulance service, reported a record-high number of phone calls received by the service in recent days.

In Stepanian’s words, as many as 6,700 Yerevan residents suspecting flu symptoms called an ambulance from December 31 through January 7.

# NKR Official Warns Against Haste in Conflict Settlement

STEPANAKERT (tert.am) -- Artificial efforts to speed up the Nagorno-Karabakh conflict settlement are not in the interests of the peace process, Spokesman for the NKR President David Babayan said, commenting on the recent congressional debate urging for rapid efforts to implement the Royce-Engel proposals.

Speaking to Tert.am, Babayan said he doesn't expect artificial haste to work in the best interests of Armenia. "The so-called speeding up of the issue cannot positively influence the settlement process. Imposing artificial timeframes is not effective," he noted.



**NKR President Spokesman David Babayan**

The spokesperson said he knows that issues more important than that were addressed at the briefing which was classified. "They discussed, for instance, the issue of pulling back snipers and reaching a peaceful solution. If those provisions are brought to life, that would be a major contribution to the settlement of the Azerbaijani-Karabakh conflict. We have repeatedly talked about this, proposed withdrawing the snipers and establishing 'days-off' to rule out [ceasefire] violations on religious, national and international holidays, but Azerbaijan would not accept them, continuing the policy of destabilization," he noted.

Babayan said he thinks that the situation would be different now had the international community made timely efforts to make Azerbaijan accept the proposals.

"But it's better late than never. We are hopeful this call will have its positive impact in term of maintaining stability in the conflict settlement zone," he said.

# Ambassador Mnatsakanyan Elected President of the Executive Board of UNDP, UNFPA and UNOPS



**Ambassador Zohrab Mnatsakanyan**

NEW YORK -- On 11 January, Armenia's Permanent Representative to the United Nations, Ambassador Zohrab Mnatsakanyan was elected President of the Executive Board of the United Nations Development Programme's (UNDP), UN Population Fund (UNFPA) and UN Office for Project Service (UNOPS), the Organizations' governing body, for a one-year term.

The Executive Board is made up of representatives of Member States and is mandated by the UN General Assembly to provide inter-governmental support to and overall supervision of the activities of UNDP, UNFPA and UNOPS. The Board meets three times a year ensuring that the three Agencies remain responsive to the evolving needs of programme countries.

"2016 will be a pivotal time for our Board and sister-agencies in light of the recent adoption of the new set of the Sustainable Development Goals (SDGs). The year will also be critical in view of the mid-term review of the strategic plans for 2014-2017, as well as the upcoming discussions of the new cycle of Quadrennial Comprehensive Policy Review, which remains the main political mechanism for member states to assess the effectiveness, efficiency, coherence and impact of the UN development system's support to national development efforts", -stated Ambassador Mnatsakanyan in his acceptance remarks.

Armenia is a member of the Executive Board of the UNDP, UNFPA and UNOPS since 2014. In June 2015, the Board approved the UNDP's and UNFPA's country programme documents for Armenia for the period of 2016-2020.

**www.massisweekly.com**
Updated every Friday

# James Warlick, US Lawmakers Discuss Karabakh Peace

WASHINGTON, DC (RFE/RL) -- The chief U.S. negotiator in the Nagorno-Karabakh peace process has met with several members of the U.S. Congress to discuss specific measures against increased ceasefire violations in the Armenian-Azerbaijani conflict zone that are strongly advocated by them.



**OSCE Minsk Group U.S. co-chair James Warlick**

James Warlick, the U.S. co-chair of the OSCE Minsk Group, said he discussed "Nagorno-Karabakh peace" with Ed Royce, the chairman of the House Foreign Affairs Committee, and other members of the panel on Wednesday.

"We agreed to work for a settlement," Warlick wrote on his Twitter page. He did not give details.

"We need to intensify work towards a negotiated settlement in 2016," Warlick tweeted on January 1. "The parties say they are willing. If not now, when?"

Royce announced the upcoming meeting with the American mediator last month when he addressed a Capitol Hill event dedicated to the 24th anniversary of Karabakh's declaration of independence from Azerbaijan. The pro-Armenian lawmaker renewed his calls for the U.S., Russian and French mediators to press Azerbaijan to accept major safeguards against intensifying violence in the Karabakh conflict zone. Warlick was present at the annual event.

Royce initiated in late October a joint letter by over 80 U.S. legislators to Warlick listing three measures which they believe would minimize deadly fighting there. Those include withdrawal of snipers by both warring sides, deployment of more OSCE observers, and installation of gunfire-locator systems on the Karabakh frontline. Warlick reportedly backed the proposed safeguards on behalf of the U.S. State Department.

"Why haven't those in the Minsk Group moved forward to endorse this?" Royce asked during the December 9 celebration on Capitol Hill. He said he and other members of the U.S. House of Representatives will discuss the matter with Warlick.

The Minsk Group co-chairs have long been urging the conflicting parties to withdraw their snipers and agree to a mechanism for international investigations of armed incidents. These measures are backed by Armenia and the Karabakh Armenians but rejected by Azerbaijan.

# Armenia Human Rights Defender Karen Andreasyan Resigns

YEREVAN -- Armenian Ombudsman Karen Andreasyan has tendered a letter of resignation, the Ombudsperson's Office press service said in an official Facebook post today. No reasons for the resignation were clear immediately



"The Human Rights Defender thanks all partners for the joint work, and expresses the hope that the protection of human rights will remain a priority of our state and society," Andreasyan spokesman said.

"There will be no other comments in this connection," the posted statement said.

Andreasyan was elected Human Rights Defender by parliament on March 2, 2011. He is a graduate of the Faculty of Law of Yerevan State University and continued his studies at the University of California, Berkeley (USA), Oxford University, the Canadian Center for Human Rights and the European Journalism Centre (Netherlands). He has a PhD in law, and is an associate professor of Yerevan State University and a member of the Armenian Bar Association.

The resignation is certain to be linked by many with his recent bitter row with several parliamentarians representing the ruling Republican Party of Armenia (HHK).They attacked Andreasian in late October when he presented the National Assembly with an annual report on the work of his office.

The HHK's Samvel Farmanian launched a particularly scathing attack on Andreasian, calling the 500-page report "sloppy" and "toothless." Farmanian, who had previously worked as President Serzh Sarkisian's press secretary, accused the human rights defender of wasting taxpayers' money and ignoring "reforms" implemented by the government.

Galust Sahakian, the parliament speaker and a senior HHK figure, effectively defended Farmanian.

Andreasian rebutted the accusations on the parliament floor, saying that Farmanian is carrying out an "immoral order" issued by an unspecified person at odds with the ombudsman. He refused to name names, saying only that he did not refer to President Sarkisian.

Under Armenia's recently amended constitution, the next ombudsman will be elected by the parliament. He or she will need to backed by at least three-fifths of its 131 members.

## International Raoul Wallenberg Foundation to Honor Memory of Asa Kent Jennings

NEW YORK -- Asa Kent Jennings was an American hero who saved 250,000 people during the Armenian Genocide.

Despite his awe-inspiring life-saving deeds, his story has not been properly recognized, not only around the world, but also in the USA and in Armenia.

The Board of the International Raoul Wallenberg Foundation has resolved to pay tribute to his legacy in a series of activities that will be made public soon.

Jennings was a small-town handicapped Minister originally from upstate New York. At the beginning of the 20th century he worked in the affluent city of Smyrna in Turkey, as a YMCA employee.



In September 1922, the Turkish nationalist army entered the city with the intent of slaughtering all its Christian residents, mostly Armenians and Greek. A huge blaze erupted through the city on September 13, trapping scores of refugees in a narrow strip by the sea. Hundreds of thousands were doome to die on the city s waterfront. Many of them were succumbing to plagues, hunger and thirst, under the Turkish siege.

Aware of their plight, Jennings had set-up a first-aid station for pregnant women in an empty home on the waterfront. He then organized a fleet of ships with the help of the US Navy in an audacious and imaginative rescue plan.

The Jennings evacuation removed 250,000 refugess from Smyrna and relocated them to the Greek Islands and the cities of Thessaloniki and Piraeus.

This blitz operation took only 7 days, to meet a Turkish city amidst threats of deportation. His courage and shrewdness saved the lives of a quarter million innocent human beings from a terrible death.

Asa Kent Jennings is a great American rescuer who went out of his way to save scores of Armenians and Greeks and his legacy needs to be divulged for the world to know that people like him were not indifferent to the plight of other human beings.

His spirit of solidarity should be a beacon of hope and should teach us that one man can make a difference.

The IRWF decision to commemorate the feats of Asa Jennings are in the framework of the NGO s research efforts aimed at discovering the brave women and men who reached-out to the Armenians in their suffering

## Fresno State and American University of Armenia Forge Partnership



**Fresno State President Joseph I. Castro and AUA President Dr. Armen Der Kiureghian signing the agreement**

FRESNO -- Fresno State officials announced a new partnership with the American University of Armenia (AUA) yesterday as part of an effort to boost opportunities for Armenian studies, The Business Journal reports.

The new deal, signed into being by Fresno State President Joseph I. Castro, will allow for the exchange of students and faculty between the two schools and promote joint research.

"Through this agreement, we will boldly rise together," said President Joseph I. Castro. "It's both important and timely."

Located in Yerevan, Armenia, AUA is in its 25th year and has a student body of 1,600. Dr. Armen Der Kiureghian, university president and one of three cofounders of AUA, said the campus has a lot to offer Fresno State students including studies in engineering, computer science, economics, public health and law.

"Our university is dynamic and it's growing," he said. "There are so many things to see and there is so much to enjoy."

Studying abroad at AUA would also allow the Central Valley's Armenian students a chance to connect with their ancestral roots, and Der Kiureghian said the university hopes to eventually be a hub for American universities.

For now, Fresno State is the first U.S. university to establish such a relationship with the school.

The new deal bolsters Fresno State's current Armenian studies program and is the latest step Castro has taken in strengthening ties between the university and the Armenian community. In April, 2015, university officials unveiled a monument dedicated to the memory of the Armenian Genocide.

## First Anniversary of Gyumri Massacre Victims Commemorated

Relatives of seven Armenians murdered in Gyumri last year on Tuesday threatened to boycott the trial of a Russian soldier who has confessed to the massacre if it continues inside the Russian military base in Armenia.

Speaking on the first anniversary of the shock killings, they were deeply dissatisfied with criminal investigations conducted by Armenian and Russian law-enforcement authorities. Some of them alleged an official cover-up.

The soldier, Valery Permyakov, was arrested near the Turkish border early on January 13, 2015, hours after six members of the Avetisian family were found shot dead in their home. The family's seventh member, a 6-month-old baby boy, died of his stab injuries a week later.

Permyakov admitted murdering them during his separate interrogations by Russian and Armenian investigators. The latter maintain that he acted alone.

The victims' relatives believe that he also had other accomplices. "Permyakov didn't act alone. It was a preplanned crime," said Rita Petrosian, whose sister Hasmik died in the killing spree.

Gyumri Mayor Samvel Balasanian seemed to echo this claim after he and senior government officials and lawmakers from Yerevan joined the relatives in remembering the murdered Avetisians during a prayer service held by their graves.

"How come he opened fire and the neighbors didn't hear the gunshots?" asked Balasanian. "Why is it that all victims of a single shooter remained in their beds? These questions must get answers during the judicial process."

A Russian military court sentenced Permyakov to 10 years in prison for desertion and theft of firearms and ammunition in a short trial held in Gyumri in August. The 20-year-old conscript went on another, Armenian trial on December 18, facing charges of murder, armed robbery and an attempt to illegally cross the Armenian-Turkish border.

The trial is taking place at the Gyumri headquarters of the Russian military base where Permyakov has been kept ever since his arrest. The presiding Armenian judge attributed the choice of the venue to security considerations. The explanation failed to satisfy Petrosian and several other relatives who were present at the opening session of the trial.

They warned on Tuesday that they will not attend further court hearings unless they are held in an Armenian court house. "We will definitely boycott the trial," said Petrosian. "They do what they want."

"We are not going to go to the Russian base anymore," agreed another woman related to the murdered family. "They want to cover up everything."

Two opposition lawmakers present at the commemoration of the massacre anniversary, Nikol Pashinian and Zaruhi Postanjian, added their voice to those demands. Postanjian claimed that the venue of the trial runs counter to Armenian law.

The next court hearing is scheduled for January 18.

## Netflix Launches in Armenia

YEREVAN (Panarmenian.net) -- Netflix announced Wednesday, January 6 that it's launching in an additional 130 countries, including Armenia, making the streaming service available in almost every country, the Guardian reports.

Reed Hastings, the company's CEO, said he's hopeful it will launch in China in the near future. The company also pointed out that North Koreans won't be able to access the wealth of western entertainment either – and Syria is out, too, due to U.S. trade embargoes.

The service will largely be in English in the new countries, supported by subtitles. The company is adding Arabic, Korean and both traditional and simplified Chinese to the roster of 17 languages it already supports.

Even before today's expansion, the company claims it's in 70m homes worldwide. While Netflix might not have as many customers as a large U.S. TV network, the firm can still




claim to have more reach than almost any other traditional broadcaster – the exceptions being news outlets and YouTube.

For the TV and film industries, Netflix does have one powerful draw: it's incredibly good at reducing piracy. The company says that the public will gladly pay a fair monthly price to have access to movies and shows, and this can have a dramatic effect on the amount of illegally downloaded material.

## AGBU Hye Geen and Young Circle Conference Armenian Youth and Higher Education: Challenges and Opportunities

PASADENA -- Believing in the decisive role of higher education in developing Armenian American leadership as well as community advancement, AGBU Hye Geen and Young Circle are organizing their 10th annual conference, this year on the theme of Armenian Youth and Higher Education: Challenges and Opportunities.

The Conference's keynote speaker is Dr. Mary A. Papazian, President of Southern Connecticut University. Her topic will be "Pathways to Professional and Cultural Success in Higher Education."

Other participants are Dr. Albert K. Karnig, President Emeritus of California State University, San Bernardino, who will address "The Challenges of Global Competitiveness and Technological Innovation for Higher Education." Then Dr. Nelly Kazman, Senior Executive Director of San Fernando Campus, La Verne University, will discuss "Higher Education as Doorway to Opportunities for Armenian American Leadership." Joining them, Alice Petrossian, Vice-Chair of Los Angeles County Commission for Women, will speak about "Nurturing the Pursuit of Higher Education among Armenian Students."

Finally, Hasmik Kyureghyan, research and development specialist, AYB Educational Foundation, will present "The Ten-Year Experience of AYB Educational Foundation, a New Learning Culture in Armenia and Beyond."

The AGBU Hye Geen and Young Circle 10th annual conference, 2016 will take place on Saturday March 5, 2016 at the Western Diocese of the Armenian Church in Burbank, California. Registration is at 9:00 a.m., Conference starts at 10:00 a.m.

Registration fee is $30, students with ID $15. It also includes lunch. Parking is free.

To register, call AGBU Head Office (626) 794-7942.

## KCRW Archives the Joyous Sounds of Hovsepian School Children



PASADENA -- Recently, the Administration at St. Gregory Hovsepian School saw an opportunity to archive the sounds that students create as they play during morning recess. The principal, Mr. Shahé Mankerian, who is an avid listener of KCRW (89.9 FM), the flagship of National Public Radio (NPR), heard about the rare opportunity to record eclectic sounds of Los Angeles. Under the subheading of SoundsLA, the newscasters on NPR's Morning Edition encouraged listeners to submit sounds they hear in their daily lives with the following tagline: It's your city. What do you hear? Mr. Mankerian thought, "No one should bypass this whimsical opportunity."

Primarily, SoundsLA is an ongoing series of audio postcards that start with a sound found in and around Los Angeles. The 15-30 seconds of sound then leads to a story behind the recording and about a particular person, place or thing. By using a mobile device to record, Mr. Mankerian submitted one of his favorite sounds, the "noise" of Armenian children playing during morning recess. He accompanied his submission with the following complementary story:

Multilingual Children at Recess: Every school recess sounds magically the same. Almost. Cacophony of noises produced by children, in various pitches, like a vocal ensemble tuning before a concert. I hear this magical noise every morning, five days a week, for twenty minutes exactly. These children weave sounds in two languages, Armenian and English, like a beautiful bilingual duet, like the mosaic of America, like the unexpected bell that never ends our conversation. Some call the sounds of our school the microcosm; I call it euphoria.

From the Administrative perspective, capturing the sound of our children provides a minimalistic snippet in the world of Armenian schools. The mere 30 seconds of joyous commotion will be preserved like a time capsule in the archives of a prestigious radio station for generations to come. Like the Japanese haiku, sometimes good things come in small packages.

Visit the SoundLA website to experience the sounds of our children and the words of Mr. Mankerian.

## Festive Dilijan Program Presents Hidden Gems of Armenian and Russian Music



LOS ANGELES --The great Russian composer Sergey Taneyev's masterpiece, the magnificent Piano Quintet, will receive a rare performance at Dilijan Chamber Music Series' January 17 concert at Zipper Hall. The first half of the concert features works by four prominent Armenian composers G. Saryan, A. Hovhaness, G. Chutjian, and E. Mirzoian, and String Quartet no. 7 by D. Shostakovich. The returning distinguished artists are violinists Searmi Park, Varty Manouelian and Movses Pogossian, violist Guillaume Sutre, cellist Armen Ksajikian, pianist Armen Guzelimian, as well as five young UCLA graduate students, making their Dilijan Series debut: soprano Danielle Bayne, and the new incarnation of the VEM String Quartet.

Dilijan Series' 11th season features a lineup of universally admired artists of international reputation, such as violinists Guillaume Sutre and Gabriela Diaz, violist Carrie Dennis, cellists Clive Greensmith and Antonio Lysy, clarinetist Michele Zukovsky, pianists Sergei Babayan, Artur Avanesov, and Armen Guzelimian, and saxophonist Armen Hyusnuntz, among others. The Series will premiere four new chamber works by Sargsyan, Zohrabian, Avanesov, and Hyusnuntz, bringing the total number of the Dilijan commissions to 38.

## The Hundred-Year Walk: An Armenian Odyssey




The Hundred-Year Walk: An Armenian Odyssey by Dawn MacKeen is the inspiring story of a young Armenian's harrowing escape from genocide and of his granddaughter's quest to retrace his steps

Growing up, Dawn MacKeen heard fragments of her grandfather Stepan Miskjian's story, of how he was swept up in the deadly mass deportation of Armenians during World War I and of how he miraculously managed to escape.

Stepan kept meticulous journals of his entire story, a "road map to his life," which MacKeen felt compelled to follow by traveling to Turkey and Syria to walk in his steps—a dangerous venture since it was illegal there to even mention this part of history. But she had to "taste his thirst, touch the land where he walked. See the green hills surrounding his Adabazar, where his dreams of becoming the town's first courier had taken root, before they withered and died in the desert."

Part reportage, part memoir, The Hundred Year Walk alternates between Stepan's tale of resilience and Dawn's remarkable journey, giving us a rare eyewitness account of the twentieth century's first large-scale genocide. It's filled with edge of your seat escapes and accounts of lifesaving kindnesses in the harsh desert. And it's in the desert that Dawn finds the unexpected: the secret to Stepan's survival.

MacKeen is an award-winning investigative journalist who has written for places like the New York Times Magazine, Salon, Elle, and Newsday. But several factors almost kept her from writing this astounding piece of history. To name just a few.

-Her grandfather barely survived the Armenian genocide. He escaped countless times, and all that he witnessed almost died with him.

-In 2006, MacKeen discovered four more notebooks just as she was about to quit the book for lack of additional information. These included Stepan's life before WWI.

-In Raqqa, Syria, she met a Bedouin sheikh who helped her find the family of the Arab sheikh who saved her grandfather's life. By the time she had returned to Syria in 2009, the Bedouin sheikh had died.

The war in Syria now makes travel to the country impossible. A century later, history is repeating itself along the Euphrates, where MacKeen traveled; the area has once again become a cemetery.

## ՍԱՆ ՏԻԵԿՈՅԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 38ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

*Կիրակի 22 Նոյեմբեր 2015 Սանտիեկոյի Ս. Յովհաննու Կարապետ Հայց. Առաքելական եկեղեցւոյ հիմնադրութեան 38րդ տարեդարձի առիթով տեղի ունեցաւ բացառիկ ձեռնարկ մը բարձրորակ յայտագրով եւ ճաշկերոյթով:*

*Տօնախմբութիւնը կը հովանաւորէր Թեմիս բարեջան առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեան: Ան իր շնորհաւորական եւ ողջոյնի խօսքը ուղարկած էր եկեղեցւոյ հիմնադրութեան 38րդ տարեդարձի առիթով:*

*Կիրակի առաւօտեան սուրբ եւ անմահ պատարագ մատուցուեցաւ եկեղեցւոյ մէջ: Ջուրի օրհնութեան արարողութիւնը կատարեց տեղւոյս հոգեւոր հովիւ Արժ. Տ. Տաթեւ Աւ. Քհնյ. Թաթուլեան եւ օրհնուած ջուրը նոր միւռնով թաթախուած բաշխեց ներկայ հաւատացեալ ժողովուրդին:*

*Արդարեւ եկեղեցւոյ «Շօշարեան» սրահը լեցուն էր մեծ թիւով հանդիսականներով, ծնողներով եւ հայկական դպրոցի աշակերտներով:*

*Ներկաները անհամբեր կը սպասէին հայկական եւ կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն, որոնք իրենց երգերով եւ արտասանութեամբ խլեցին ներկաներու որոտընդոստ ծափահարութիւնը:*

*Ամերիկեան եւ հայկական քայլերգով եւ աղօթքով բացումը կատարուեցաւ օրուան հանդիսութեան:*

*Հանդիսավար Էմիլյա Արութիւնեան որ 6 տարեկանէն ի վեր կը յաճախէր հայկական դպրոց, հանդիսութենէն քանի մը օր առաջ մեծ յաջողութեամբ աւարտեց փաստաբանական քննութիւնները եւ այսօր հպարտութեամբ կանգնած իր շնորհակալութիւնները կը յայտնէր նշելով որ իր յաջողութիւնը կը պարտի եկեղեցւոյ շրջապատին մէջ մեծցած ըլլալուն:*

*Հայկական տարազով մենապարեց Եղիշէ Սիմաւոնեան, խլելով ծափեր եւ բացականչութիւններ: 6 տարեկան փոքրիկն Սոնան դաշնամուրի վրայ նուագեց մեծ ինքնավստահութեամբ:*

*Դպրոցի ժրաջան տնօրէնուհի Էրնա Բարաջանեան եւ Տիգրան Օվանէսեան գնահատանքի արժանացան եւ պարգեւատրուեցան «Հայ ոգի» շքանշանով, իսկ Էմիլյա Արութիւնեան եւ Սերոբ Քարաօղլանեան տարուան տիպար ծխականները մակդիրին արժանացան:*

*Ցեղասպանութեան 100 ամեակի առիթով եկեղեցւոյս հովիւը եւ հոգաբարձութիւնը հրաւիրած էին Սանտիեկոյի Ամերիկեան համալսարաններու եւ գոլէճի հայ աշակերտութիւնը թիւով 50 հոգիներ, որոնք մեծ ուրախութեամբ ներկայ գտնուեցան հանդիսութեան:*

*Հայ երիտասարդութիւնը մեր ոյժն ու կորովն են մեր յոյսն ու ապագան: Այս սերունդն է որ աշխարհի որ մէկ հողամասին վրայ գտնուին պիտի սատարեն հայ լեզուին եւ հայ մշակոյթին եւ անպատճառ պիտի բողոքեն անարդարութեանց դէմ:*

*Օրուան բանախօսն էր Ամերիկայի Միացեալ Նահանգներու դատախազ Լէրի Պըրնս: Ան իր իւրայատուկ իմաստալից պատգամն ու յորդորը փոխանցեց մասնաւորաբար երիտասարդ համալսարանականներուն, ինչպէս նաեւ ցուցադրեց հայ համբաւաւոր երաժիշտներու, նկարիչներու, գիտութեան ասպարէզի մէջ համբաւաւոր դարձած տիտաններու տեսաերիզը:*

*Կլենտէյլ քաղաքի Ս. Պետրոս եկեղեցւոյ քաջարի հովիւ Տ. Վազգէն Աւ. Քհնյ. Մովսէսեան իր տպաւորիչ եւ ոգեւորիչ ատենախօսութեամբ միջազգային արժէք տուաւ ոչ միայն հայ ցեղասպանութեան այլեւ վերջին տասնամեակներուն, մեծ թիւով տարբեր երկիրներու մէջ կատարուած ցեղասպանութեանց: Նմանապէս խօսք առին Սանտիեկոյի Սոլանա Պիչի քաղաքապետ Ճօ Գլըճեան, Մոնթէպէլլօ քաղաքի քաղաքապետ Ճէք Հաճընլեանը եւ ուրիշներ: Եկեղեցւոյս հովիւ Տ. Տաթեւ աւ. քհնյ. Թաթուլեանի եզրափակիչ խօսքերով եւ «Պահպանիչ» աղօթքով այս բացառիկ հանդիսութիւնը իր աւարտին հասաւ եւ հարիւրաւոր հայորդիներ մեկնեցան սրահէն բաւարարուած, մխիթարուած բարձր տրամադրութեամբ եւ հաւատքով:*

## ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ «ՋԱՆ ԹԱւՐԻԶ»Ի ՁԵՌՆԱՐԿԸ

*Կիրակի Դեկտեմբեր 13ին կլ. ժամի 3:30ին տեղի ունեցաւ Լոս Անճելոսի «Ջան Թաւրիզ» կազմակերպութեան ընկերական մտերմիկ հաւաքը, որին ներկայ էին շուրջ 200 անդամ-անդամուհիներ եւ հիւրեր:*

*Պաշտօնական բաժնի բացումը կատարեց վարչական Ռուբինա Թամրազեանը, իսկ նախագահ Յուսիկ Յարութիւնեանը անդրադարձաւ նախկին եւ ներկայ վարչականներին, թուեց անունները եւ յաջողութիւններ մաղթեց: Նա անդրադարձաւ ապագայ ծրագրերին, ձեռնարկներին եւ յիշեց որ գալիք տարուայ սկիզբներին նշուելու է Թաւրիզի «Հայկազեան Թամարեան» դպրոցի 120 ամեակը: Նախագահը յայտնեց նաեւ որ միութեան կից ստեղծուել է «Երիտասարդական Բաժանմունք», որն կը տայ մասնաւոր ձեռնակներ: Այդ բաժնի պատասխանատուներն են Էրվիւին Եաղուբեանը, Թալին Թունեանը եւ Սերժիկ Մելիք Միրզայեանը: Նրանք մասամբ ներկայացրին իրենց ծրագրերը: Ապա ելոյթ ունեցաւ տիկ. Տիանա Յարութիւնեանը եւ անդրադարձաւ Թաւրիզի անցեալ օրերի պատմութեանը, դպրոցներին եւ այսօրուայ իրավիճակին: Ներկայացուեց «Ջան Թաւրիզ»ի նորընտիր վարչականների անունները հետեւեալ կարգով:*

*Յուսիկ Յարութիւնեան նախագահ, Գեղանոյշ Վահանեան, փոխ նախագահ, Ռուբինա Թամրազեան քարտուղար, Նորիկ Արաթունեան, գանձապահ, Մեսրոպ Բարսեղեան, խորհրդական, Աշոտ Ամիրխանեան խորհրդական, Ռուբիկ Սահբաթեան խորհրդական:*

*Հանդիպումն աւարտուեց ջերմ եւ ուրախ մթնոլորտում: Ներկաներին տրուեցին գիրք եւ C.D.:*

## ԽՈՆԱՐՀՈՒՄ ՍԵՐԳԷՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



*Յունուարի 9-ը 20-րդ դարի մեծատաղանդ կինոռեժիսոր Սերգէյ (Սարգիս) Փարաջանովի տարեդարձի օրն է: Ուկրաինայի եւ Հայաստանի ԽՍՀ-ների ժողովրդական արտիստ, բազում պետական եւ միջազգային մրցանակների դափնեկիր, վաղամեռիկ հանճարը, որը ծնուել եւ ստեղծագործել է Թբիլիսում, այսօր կը դառնար 92 տարեկան:*

*2016 թուականի Յունուարի 9-ին, կազմակերպուեց այցելութիւն Թբիլիսիում Մանթաշովեան շարքերի պատին տեղադրուած ազգի արժանաւոր զաւակի՝ Սերգէյ Փարաջանովի յուշարձանին: Թեմի պաշտօնէութիւնը, երիտասարդական բաժնի ակտիւիստները եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կիրակնօրեայ դպրոցի աշակերտութիւնը իրենց խոնարհումը բերեցին մեծատաղանդ արուեստագէտի յիշատակին եւ Փարաջանովի արձանը զարդարեցին նրա սիրած նռներով ու ծաղիկներով:*

*Վիրահայոց թեմի Մառնէուլի շրջանի հայկական համայնքների հոգեւոր հովիւ՝ Քվեմօ Քարթլիի հոգեւորտեսուչ հոգեշնորհ Տէր Խորէն վարդապետ Յովհաննիսեանը աղօթք բարձրացրեց Փարաջանովի հոգու խաղաղութեան համար: Աշխարհահռչակ կինոռեժիսորի տաղանդի ու գործունէութեան մասին խօսք ասացին «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւով Ջիդիլեանը մամլոյ խօսնակ Սուսաննա Խաչատրեանը, արժեւորելով նրա ներդրումը համաշխարհային կինոարուեստի զարգացման գործում: Սերգէյ Փարաջանովը յիրաւի այն հանճարներից է, որը վաղուց դադարել է մէկ ժողովրդի զաւակ լինելուց, դառնալով համամարդակային արուեստի կարկառուն դէմք:*

*Նռներով ու կարմիր մեխակներով զարդարուած կինոռեժիսորի յուշարձանը դարձաւ անմահացած Սերգէյ Փարաջանովի յիշատակի մեծարում:*



# ԱՅՇԱՅԻՆ «ԱՆԷԾՔԸ»

*ԴՈԿՏ.ՀՐԱՑՐ ՃԷՊՃԷՃԵԱՆ*

*Այշային հանդիպեցայ Նիկոսիա, Կիպրոս: Եկած էր մաս կազմելու Քրիստոնէական տեղեկատուութեան կազմակերպութեան մէկ համագումար-ժողովին: Ան քաղաքացիութեամբ Թրքահպատակ էր, ազգութեամբ՝ Թուրք եւ Պոլսոյ բնակիչներէն:*

*Այշան երիտասարդ աղջիկ մըն է, որ ապրելու եւ գործելու տենչ ունի, բայց նաեւ կեանքի ու համոզմունքներու նկատմամբ՝ կեցուածք:*

*Ինծի հետ հանդիպելէ եւ զրուցելէ, մանաւանդ գիտնալէ ետք, որ ես հայ եմ՝ Այշան սկսաւ իր կեցուածքները մէկ-մէկ բացայայտել:*

*«Երեւի կ'ատես եւ չես փափաքիր Թուրքի մը հետ խօսիլ», եղաւ Այշային առաջին արագ ակնարկը, աչքերը վար եւ քիչ մը ծայրէն հպանցիկ նայուածք մը նետելով վրաս:*

*«Այդպէս չէ, բայց մեր միջեւ առկայ է մեծ «Թնճուկ» մը, որ պէտք է հանգուցալուծել», եղաւ իմ պատասխանս:*

*Այշան նկատեց, որ իմ հետս կարելի է խօսակցութիւնը շարունակել: Երեւի սպասեց իմ դիրքորոշումիս, թէ արդեօ՞ք պիտի ուզէի հետը խօսիլ: Վերջապէս ես հայ եմ եւ ինքը Թուրք:*

*Եւ չուշացաւ երիտասարդ Այշային կեանքի պատմութիւնը: Հաւանաբար նաեւ ես պէտք էր կռահէի, թէ ան կ'ուզէ իր պատմութիւնը ներկայացնել ինծի, որպէսզի ես ալ գիտնամ:*

*«Ծնած եմ Պոլիս եւ ընտանիքիս բոլոր անդամներն ալ իսլամական կրօնքին եւ դաւանանքին կը պատկանին», եղաւ Այշայի առաջին ակնարկութիւնը:*

*Այշան այսօր երեսուն տարեկան է. ան քսան տարեկան հասակին դարձած է քրիստոնեայ, եւ այսօր կը գործէ Պոլսոյ մէջ Քրիստոնէական տեղեկատուութեան մէկ կազմակերպութեան հետ: «Ծնողքս եւ ընտանիքս տակաւին իսլամ են», ըսաւ ան:*

*Այշային ընտանիքը տակաւին կը յարաբերի անոր հետ, անկախ այն իրականութենէն, որ ան քրիստոնէական հաւատամքը ընդունած է՝ իր կեանքին իբրեւ հիմք: Եւ Այշային համար քրիստոնեայ ըլլալը միայն հաւատքի մարմնացում չէ եղած, այլ՝ կեանքին բացուելու, ինչպէս նաեւ «ուրիշը» տեսնելու եւ հասկնալու միջոց:*

*«Հայրս ազգայնամոլ Թուրք է», ըսաւ Այշան, «եւ մենք մեր կրթութիւնը ստացանք դաստիարակուելով ազգայնամոլ ու ծայրայեղ ուսուցմունքով», աւելցուց ան: Քրիստոնեայ ըլլալէ ետք, Այշան սկսած է բացուիլ աշխարհին, տեսնել ուրիշը, եւ հասկնալ ու ընդունիլ զայն: «Եւ այդ «ուրիշին» մէջն է նաեւ հայը, որուն ընդմէջէն իմացայ ու սորվեցայ Հայոց ցեղասպանութեան մասին, ծանօթանալով այդ ահաւոր դէպքերուն, որ իմ ժողովուրդս գործած է ձեզի դէմ», ըսաւ Այշան:*

*Այշային համար՝ Ցեղասպանութիւնը եւ իր երկրի արիւնոտ ու սարսափազդու պատմութիւնը ուրուականի մը նման գինք հալածած է ու ցայսօր կը շարունակէ հալածել: «Չեմ ուզեր իմ ինքնութիւնս առնչել այս երկրին ու ժողովուրդին հետ», եղաւ Այշայի զօրաւոր ու խիզախ կեցուածքը. ան աչքերը աւելի հաստատ եւ ինքնավստահ կերպով սեւեռեց վրաս ու շարունակեց. «Իմ հայրս չի գիտեր իր ընտանիքին պատմութիւնը: Իսկ «պատմութիւնը» չի գիտնալը պատահական երեւոյթ չէ, այլ՝ կանխամտածուած ծրագիր՝ ջնջելու համար անցեալի հետ կապուած ամէն փաստ ու յիշատակ»:*

*Այշային ընտանիքը Գոնիայէն է. հոն ապրած են յոյներ: «Կրնա՞յ ըլլալ, որ ես յունական արմատներ ունիմ», շուարած հարցուց ինծի ինքնութեան փնտռտուքի մէջ եղող երիտասարդուհին:*

*Այշան կը փնտռէր պատկանելիութիւն՝ հեռանալու եւ անջատուելու համար իր ներկայի ինքնութենէն, որմէ ամէն ձեւով կը փորձէր փախուստ տալ: Անոր դէմքին վրայ գծուեցաւ պզտիկ ժպիտ մը, կարծես «յոյս»-ի ժպիտ մըն էր, որուն կ'ուզէր ամէն գնով հասնիլ: «Մարդիկ կ'ըսեն ինծի, որ դէմքիս գիծերն ու արտայայտութիւնները յունական են», աւելցուց ան:*

*Իմանալէ ետք, թէ քանիցս գտնուած եմ Թուրքիա եւ յատկապէս Պոլիս, Այշա ըսաւ. «Մեր երկրին վրայ անէծք կայ»: «Այս անէծքը ամէն օր կ'ապրիմ, եւ ատոր համար չեմ ուզեր առնչուիլ իմ ժողովուրդիս հետ»: Ու դարձեալ ինծի նայելով հարց տուաւ. «Չե՞ս զգացած այս անէծքը երբ յաճախ գտնուած ես Պոլիս»:*

*Այշային «անէծքը», իմ եւ հայուն համար Ցեղասպանութեան ցաւն է: Եւ Ցեղասպանութեան ցաւը՝ իմ «անէծքը», հայուն ապրած եւ տակաւին շարունակուող կեանքն է, որ վերածուած է ինքնութեան: Այս «ինքնութիւնն» էր, որ պէտք է բաժնէի Այշային հետ:*

*«Իմ ընտանիքս քսան եւ հինգ նահատակ տուած է Հայոց դէմ գործուած տարբեր ցեղասպանութիւններուն ընթացքին. սկսելով Ատանայի Ջարդերէն, 1909-ին եւ մինչեւ Մեծ Եղեռնը», ըսի Այշային: «Եւ այս իւրաքանչիւր հայուն անէծքն է, որովհետեւ իւրաքանչիւր հայ ընտանիքի մէջ կայ թափած արիւն»:*

*Սկսած էի տեսնել, թէ Այշան զգայուն նկարագիր իւրացուցած անձ մըն է: Եւ եթէ ան ունէր հաստատ եւ խիզախ կեցուածքներ, բայց նոյնքան մեղմ սիրտ ու հոգի մը: Այշային աչքերուն մէջ սկսան կուտակուիլ արցունքներ: «Անէծքին» արցունքները:*

*Չեմ գիտեր սակայն, թէ ինչո՞ւ «մխրճուեցայ» նիւթին մէջ եւ պատմութեան սեւ փորձառութիւնները մէկ-մէկ կիսեցի անոր հետ: Եւ իմ ընտանիքիս պատմութիւններուն անդրադառնալով վեր առի իմ հարազատներէս՝ հօրս, մօրեղբօրս, տօքթ. Ֆիլիփ Յովնանեանի քաջարի կեցուածքը, երբ բուժած էր իր փոքր եղբօր սպաննող Թուրք զինուորականը, որ Համաշխարհային Ա. պատերազմի ընթացքին ծանրօրէն վիրաւորուած էր եւ բերուած հիւանդանոց, ու դրուած անոր խնամքին տակ: Ան բուժած էր Թուրքը եւ ոչ թէ սպաննած զայն, երբ այդ նոյն Թուրք զինուորականը ջախջախած էր իր պատանի եղբօր գլուխը:*

*«Այս պատմութիւնը հոլիվուտեան ֆիլմ չէ»: Ես կը խօսէի Այշային հետ՝ դէմքիս վրայ պզտիկ ժպիտով մը, բայց այդ ժպիտը խառնուած էր տխրութեան: Որովհետեւ ասիկա իմ հարազատ պատմութիւնս է, որ իմ մէջս կերտած է «ցաւը»:*

*«Այս է հայուն կեցուածքը: Հայը չի սիրեր սպաննել՝ կ'ուզէ բուժել», եղաւ իմ եզրակացութիւնս:*

*Բայց «բուժելը» ունի նաեւ իր պարտաւորութիւնները: «Ես Հայոց ցեղասպանութենէն վերապրողներու երրորդ սերունդին կը պատկանիմ, իսկ զաւակներս չորրորդ: Մենք չ'ապրեցանք Ցեղասպանութիւնը, բայց մեր բոլոր էութեան մէջ կը կրենք ցաւը՝ քու ըսած անէծքիդ ցաւը», -ըսի Այշային:*

*Կը զգայի, որ պէտք է շարունակեմ. «Գիտեմ, որ դուն Ցեղասպանութիւնը չի գործեցիր: Բայց ինչպէս ես իմ ժողովուրդիս կրած ցաւը կ'ապրիմ, դուն ալ պիտի ապրիս քուկիններուդ գործած ոճիրին հետեւանքը, եւ պիտի աշխատիս բուժել իմս՝ հայուն ցաւը»: Պարտականութի՞ւն, թէ մարտահրաւէր երիտասարդ Այշային:*

*Զգացի, որ ծանրաբեռնուած էի: Եւ նոյնքան ծանրաբեռնած էի Այշային մեղմ ու զգայուն, միաժամանակ փխրուն հոգին, որ կը փնտռէր ելք մը՝ անէծքի իր կեանքէն դուրս գալու համար:*

*Կը գտնուէինք ընկերային հաւաքոյթի մը մէջ: Մեզի հետ էին նաեւ բաւական այլ բարեկամներ: Մեր խօսակցութեան տուինք «ընդմիջում» մը:*

*Հաւաքոյթի աւարտն էր արդէն եւ պէտք էր մեկնէինք: Այշան դարձեալ մօտեցաւ. անոր աչքերուն մէջ կար այդ նոյն արցունքը: Անէծքին արցունքները, բայց Այշան իր հաստատ կեցուածքին մէջ էր դարձեալ:*

*«Կ'ուզեմ ներողութիւն խնդրել քեզի տառապեցնող այդ ցաւին համար, որ մենք պատճառած ենք», ըսաւ ան:*

*Այշային եւ իմ միջեւ այդ օրը կար մէկ օղակ, որ կը միացնէր մեզի. այդ ալ «անէծքն» էր: Անէծքը՝*

*Ցեղասպանութեան եւ անոր ահաւորութեան: Իմ եւ իւրաքանչիւր հայուն ցաւը, որ մինչեւ այսօր կը շարունակենք տանիլ:*

*Այշա եւ իւրաքանչիւր Թուրք, գիտակցին թէ ոչ, ընդունին թէ դրժեն Հայոց ցեղասպանութիւնը. անոնք իրենց կեանքերուն եւ երկրին վրայ կը զգան ու կ'ապրին այդ անէծքը, որ ուրուականի մը նման կը հալածէ զիրենք:*

*Չեմ գիտեր մինչեւ ե՞րբ Այշան եւ իր նմանները պիտի կարենան փախչիլ իրենց ինքնութենէն, եւ կամ պիտի ապրին այդ ինքնութենէն անջատ: Վերջապէս սակայն «անէծքը» տակաւին առկայ է: Այշային եւ իւրաքանչիւր Թուրքին «Անէծքը», ինչպէս նաեւ՝ հայունը, որ պէտք է բուժուի ու հատուցուի:*






# ՊԱՏԱՌԻԿՆԵՐ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊԻ ԻՍԹԱՆՊՈՒԼ

*ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ*

*Յուլիս 18-ին, ճոխ նախաճաշէ մը ետք, հրաժեշտ առնելով մեր կորսուած պապենական Արեւմտահայաստանէն, եկանք օդակայան Իսթանպուլ վերադառնալու:*

*Պահը շատ յուզիչ էր: Հի՜ն, կորսուած բայց մտերիմ հարազատէ մը բաժանումի պահն էր կարծես: Անհասկնալի փոթորիկ մը եւ մելամաղձոտութիւն մը կլանած էր հոգիս: Պապենական հողերուս, արիւնաթաթախ Հայրենիքիս «ցտեսութիւն» պիտի ըսէի քանի մը ժամէն: «Հայաստան Երկիր Դրախտավայր»ը քանի մը օր վայելելէս ետք, կարծես յանցաւոր կը զգայի որ պիտի «լքեմ» զինք: Բայց ո՛չ: Օր մը, ճ՛ր մը տարբեր խանդամանքով վերադառնալու խոստումով կը մեկնէի ես: Եթէ ոչ ես, իմ զաւակներս, եթէ ոչ զաւակներս, ուրեմն թոռներս կամ ծոռներս կամ անոնց զաւակներն ու թոռները պիտի վերադառնան իմ նախահայրերուս արիւնաբոյր հայրենիքը, որպէս իրա՛ւ տէրերը այդ երկրին: Անոնք Արարատը պիտի վայելեն նաեւ արեւմուտքէն: Անոնք պիտի աղօթեն մեր հազարումէկ եկեղեցիներուն մէջ: Անոնք պիտի լողան Վանայ Լիճի զուլալ ջուրերուն մէջ: Անոնք պիտի ըմպեն ջինջ ջուրերը «պին կէօլ»ի աղբիւրներուն: Անոնք պիտի վայելեն բիւրաւոր բարիքները հայրենի մեր դաշտերուն եւ հիւթեղ պտուղները մեր մրգաստաններուն: Անոնք պիտի գինովնան մեր այգիներուն արեւահամ գինիով: Անոնք իրենց քրտինքով պիտի շաղախեն հողը մեր մայրենի եւ «պիտի կերտեն նոր արշալոյս»: Եւ անոնք, կտրիճները մեր քաջարի եւ հեզաճկուն աղջիկները մեր սիրասուն, ձեռք ձեռքի, գիրկ գիրկի պիտի պարեն հայրենի պարարտ հողին վրայ եւ իրենք ալ պարարտանալով պիտի լեցնեն աշխարհը մեր Նայիրեան:*

*Օդակայանի ապահովութեան հսկիչներու քննչական գործիքներէն մին, մեր խումբի անդամներու մէկուն ճամպրուկի մէջ մետաղեայ, զէնքի նմանող գործիքի մը ստուերը տեսեր է: Մարդը առին տարին: Դոկտ. Կարպիսը հետեւեցաւ անոնց որպէսզի հարցը լուծէ: Մի ըսեր, մեր ճամբորդին նուէր մը տուեր են, տուփի մը մէջ, որը մետաղեայ գործնական «միակապուած» գործիք մըն էր (դանակ, պատառաքաղ, տուփ բանալիք, շիշ բանալիք, մկրատ, փոքր մուրճ եւ կացին եւայլն...) պտոյտներու կամ տան մէջ գործածելու: Երբ ճամպրուկը բացին եւ ստուգեցին, ամէնքս շունչ մը քաշեցինք: Խեղճ մարդը քրտինքներու մէջ, լոլիկի պէս կարմրցած եւ վախցած, վերադարձաւ:*

*Իսթանպուլի «Քէմալ Աթաթուրք Օդակայան»ը հասանք կ. յ. ժամը 5:30-ին: Քանի որ Ռամազանի շրջանն էր եւ ընթրիքի ժամը, բեռնակիրները եւ օդակայանին պաշտօնեաներէն շատերը ընթրելու գացեր էին, ուրեմն մեծ իրարանցում կար օդակայանին մէջ: Հարիւրաւոր ճամպրուկներ մէջտեղերը, խճողում, դուրսը թրաֆիք, հրմշտուք, կատարեալ լաբիւրինթոս: Կ'արժէր տեսնել Քաթիային ջղայնութիւնը: Այդ յուզական աղջիկը անցնող երկու շաբաթներու յուզումներն ու բարկութիւնը կարծես հոս կ'ուզեր թափել: "This country is a zoo and you are the animals living in this zoo" կը բոռար: Եւ այս՝ քանի մը անգամ վալիզները փնտռելու հոս - հոն վազվզելով: Խեղճ ամուսինը, Տիգրանը, կը փորձէր հանդարտեցնել զինք: «Ձգէ այս սրիկաներուն դասը ես պիտի տամ» կ'ըսէր Քաթիան: Մեր խումբին ուղեկցորդը շատ նեղուեցաւ այս անարգական խօսքերէն եւ դէմքը կախեց: Ան Քաթիային ըսաւ որ անգամ մըն ալ Թուրքիա չի կրնար գալ, քանի որ մեզի հետեւող լրտեսները նշմարած եւ արձանագրած էին իր խօսքերը: Որու՞ հոգը:*

*Երբ վերջապէս օդակայանէն դուրս ելանք, տեսանք որ քանի մը Թուրք չարժավարներ իրարու հայհոյելով կը կռուէին: Ինչ լաւ պիտի ըլլար եթէ ես ալ կարենայի այդ կռիւին մասնակցիլ եւ քանի մը Թուրք շուներու գլուխները ջարդել...:*

*Պանդոկ տեղաւորուելէ ետք ճամբայ ելանք նախապէս ապահովուած ճաշարան մը երթալու: Ծովեզերքի հանրային կանանչապատ եւ ծառերով յագեցած զբօսավայրերը խճողուած էին ընտանիքներով, որոնք Ռամազանի օրուայ աւարտին եկած էին ընտանեօք եւ բարեկամներով ընթրելու: Ոմանք փոքր սեղանիկներու վրայ, ուրիշներ գետինը գորգ մը կամ ծածկոց մը փռած տեղաւորուած էին: Ամէն քայլափոխին խորոված «մանղալ»ները փայտածուխի եւ իւղոտ միսի այրուածքի անուշահոտ բուրմունքով մեր ռունգերը կը լեցնէին: Որքա՜ն պիտի ուզէի ես ալ հոն ըլլալ եւ անոնց հետ վայելել խորոված ք|իչ մը իւղոտ միսերը... : Անշուշտ Թրքական «շարքի»ները (երգերը) ամէն տեղ էին, կարծես ծառերու ճիւղերուն եւ տերեւներուն մէջէն մեր ականջները ծակելու:*

*Պասէն իջնելով մտանք լուսազարդարուած փողոց մը: Բազմաթիւ ճաշարաններ քով քովի շարուած էին: Ընքանիքներ, բարեկամական խումբեր, երիտասարդներ, գրաւած էին սեղանները: Մենք այն օրը ձուկ պիտի ուտէինք: Օդը տաք եւ շատ խոնաւ էր: Տեղաւորուեցանք ճամբուն վրայ զետեղուած երկար սեղանի մը շուրջ մեծ հովահարէ մը հոսող օդով կը զովանար քիչ մը: Վստահաբար այս ճամբայէն գիշերային որոշ ժամէ մը ետք ինքնաշարժ չէր անցներ: Մէզէները («աղցան»ը նոյն համը չտար...) եկան Թրքական օղիով: Շատ համեղ էին: Եկաւ տապկուած թարմ ձուկը իր զարդարանքներով: Իմ սովորութեանս համաձայն, եթէ ճաշը շատ համով ըլլայ, չեմ խօսիր շուրջիններուս հետ եւ գլուխս կախած պնակիս վրայ, կը կեդրոնանամ ճաշին համը անընդմէջ վայելելու, «քիչ մը» արագ ծամելով: Պատառները մէկը միւսին ետեւէն կ'աճապարեն վար սահելու: «Ետեւէդ ձիաւոր չի գար կոր, քիչ մը կամաց կեր» կ'ըսէր լուսահոգի մայրս:*

*Այս ճաշարաններու յաճախորդները զբաղեցնելու համար, շրջուն նուագախումբեր եւ երգիչներ ման կու գային: Բնականաբար մօտեցան նաեւ մեր խումբին եւ մեզի ծանօթ երգեր սկսան երգել, ինչպէս «Եա Մուստաֆա, եա Մուստաֆա», Թրքերէնով «աղջիկս քեզի Ալիին կ'ուզե՞ս տա՞մ. Ձեմ ուզեր հայրիկ ճան չեմ ուզեր», Թրքերէնի թարգմանուած եւրոպական երգեր, եւայլն: Այս նուագախումբերը «պախշիշ»ով (նուէր) կը վճարուէին, այնպէս որ ճաշարանապետերը անվճար «entertainer»ներ ունէին:*

*Պասով գիշերային աղուոր պտոյտ մըն ալ ընելով Պոլսոյ թաղերուն մէջ, վերադարձանք մեր պանդոկը հանգստանալու:*


ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ
**Կը հրաւիրէ ձեզ**



ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅԻ ՄԸ
ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 9ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻՒ

**Բացման Խօսք՝ Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան**
Հոգաբարձու եւ Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբի (Հայերէնով)



Պիտի զեկուցէ
ԷՐԻՔ ՆԱԶԱՐԵԱՆ
Ամերիկահայ, սենարիսթ եւ ֆիլմարտադրիչ

**Հանդիսավար՝ Իրաւաբան ԷՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ**
Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան

Երեքշաբթի, Յունուար 19, 2016, երեկոյեան ժամը 8:00ին
Պոլսահայ Միութեան «Գրիգոր եւ Աւետ Քիւրքչիւօղլու» սրահին մէջ

***19726 Sherman Way, Winnetka, CA 91306***
Տեղեկութեանց համար հեռաձայնել Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին
(818) 800–1976 (cell)
Մուտքը ազատ Հիւրասիրութիւն Հրանդ Տինք սրահին մէջ

ԿՈՉ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
Հանգուցեալ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ յիշատակին

ՆՈՅՆ ՕՐԸ Երեքշաբթի, Յունուար 19, 2016, կէսօրէ ետք ժամը 3:00ին, տեղի պիտի ունենայ ծաղկեպսակի զետեղման արարողութիւն, Մոնթեպելլոյի Հայոց Նահատակաց Յուշարձանին առջեւ:
Արարողութենէն ետք, պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտօն:

***Bicknell Park: 850 via San Clemente, Montebello, Ca 90640***

## ՄԱՐԴՈՑ 7 ՏԵՍԱԿ, ՈՐՈՆՑՄԷ ՊԷՏՔ Է ԽՈՒՍԱՓԻԼ

Բոլորիս քաջ ծանօթ են մարդիկ, որոնք շրջապատի մէջ ժխտական ուժ կը տարածեն՝ իրենց ողջ էութեամբ: Նմանատիպ մարդիկ կրնան վատ ազդեցութիւն ունենալ դէպի յաջողութիւն տանող ձեր գործողութիւններուն վրայ: Արդիւնքներու հասնելու համար դուք պէտք է առաւելագոյն զգօնութիւն պահպանէք: Գրգռուածութիւնը եւ ճնշումը, որոնք կ'առաջանան տեսադաշտին՝ այդ տեսակ մարդոց յայտնուելով, աւելորդ խոչընդոտ կը դառնան, ուստի նմաններէն պէտք է հնարաւորինս խուսափիլ:

Կը ներկայացնենք «Թունաւոր» մարդոց եօթը տեսակ, որոնց հետ երբեք պէտք չէ գործ ունենալ:

1. Խարդախները. Այս մարդիկ խարդախութեան ոլորտի մասնագէտներ են: Անոնք շատ լաւ կրնան որոշել մարդու տկար կողմերը եւ գիտեն, թէ որ լծակէն պէտք է քաշել, որպէսզի միւսներուն ստիպեն ընել այն, ինչ որ ձեռնտու է իրենց:

-Ասոնց վտանգը. Այս մարդոց հետ յարաբերիլը բացասաբար կ'ազդէ ձեր համոզումներու համակարգին եւ սեփական արժանապատուութեան զգացումին վրայ: Անոնք ճանապարհներ կը կտրեն ձեզի ստիպելու ընել այն, ինչ որ դուք չէք ուզեր կատարել, ինչ որ ձեզ, իբրեւ անհատականութիւն, կ'աւերէ: Դուք կը սկսիք ապրիլ ոչ թէ ձեր, այլ այդ մարդոց առաջնահերթութիւններով եւ համոզումներով:

2. Նարգիզներ. Ասոնք սեփական կարեւորութեան սրուած զգացումով մարդիկ են, որոնք վարժուած են համարել, որ աշխարհը կը պտտի իրենց առանցքին շուրջ: Անոնք այնքան ալ խորամանկ չեն, ինչպէս նախորդները, սակայն նոյնպէս կը ձգտին շրջապատի մարդիկը իրենց ենթարկել: Սովորաբար նման մարդոց կ'ուզես ըսել. «Դուն տիեզերքի կեդրոնը չես»:

-Ասոնց վտանգը. Ասոնք սեւեռուած են իրենք իրենց եւ կեդրոնացած՝ միայն իրենց խնդիրներուն վրայ: Ձեր հետաքրքրութիւնները անոնց բացարձակ չեն յուզեր: Անոնք կը շահագործեն ձեզ, լիովին համոզուած են, որ ատիկա շատ բնական է, որովհետեւ բոլորը պէտք է զոհաբերուին յանուն իրենց:

3. Թերահաւատները. Այս մարդիկ չեն գնահատեր այն լաւը, որ կայ իրենց կեանքին մէջ: Եթէ դուք անոնց ըսէք,- «Այսօր հրաշալի, արեւային եղանակ է», անոնք կը պատասխանեն, որ -վաղը անձրեւ եւ ցուրտ պիտի ըլլայ: Եթէ անոնց հետ կիսէք ձեր ուրախութիւնը, անոնք անպայման պատճառ մը կը գտնեն ձեզ թունաւորելու:

- Ինչով վտանգաւոր են. Այս մարդիկ շրջապատողներէն կը խլեն ուրախութիւնը: Անոնք աշխարհին կը նային բացասաբար, ինչով եւ կը վարակեն բոլորը: Յարաբերելով այսպիսի մարդոց հետ, դուք նոյնպէս կը սկսիք ամէն ինչ մոխրագոյն տեսնել:

4. Քննադատները. Եթէ դուք որեւէ բան համարէք աչք շոյող եւ հետաքրքրական, ուրեմն նոյնը անոնք պիտի գնահատեն տարօրինակ եւ անհրապոյր: Եթէ դուք ոեւէ մէկը համարէք տաղանդաւոր եւ հեռանկարային, ուրեմն անոնք նոյն անձը պիտի որակեն յիմար եւ անշնորհք: Անոնց պէտք է միշտ մէկուն հետ բանավիճիլ, կը կարծեն, որ իրենց կարծիքը միակ ճիշդն է, իսկ անոնք, որոնք համամիտ չեն, յիմարներ են:

-Այսպիսիներուն վտանգը. Անոնք կը փորձեն ողջ աշխարհը յարմարցնել իրենք իրենց եւ ատիկա կը սկսին զիրենք շրջապատողներէն: Այդ մադիկ չեն հասկնար, որ կեանքը առանց ատոր ալ հետաքրքրական է, որ բոլոր մարդիկ տարբեր են եւ իւրաքանչիւրը ունի իր կարծիքը: Անոնք կը սնանին ժխտական զգացումներով, զորս կը ստանան անվերջանալի բանավէճերու ընթացքին:

5. Երազը սպաննողները. Ամէն անգամ, երբ դուք գաղափարներ կը ծնիք, այդ մարդիկ ձեզի կ'ըսեն, որ անոնց իրականացումը անհնար է: Երբ կ'աշխատիք որեւէ բանի հասնիլ, անոնք ձեզ վար կը քաշեն: Երբ դուք կ'երազէք որեւէ բանի մասին, անոնք առաջինը ձեզի կը տեղեկացնեն, որ ձեր երազանքները անիրականանալի են:

-Ինչով վտանգաւոր են երազ սպաննողները. Անոնք սեւեռուած են այն բանի վրայ, որ կայ այժմ, լիովին մերժելով այն, որ կրնար եւ ըլլալ: Անոնք դիւրութեամբ կրնան քանդել ձեր ինքնավստահութիւնն ու հաւատքը սեփական ուժերուն նկատմամբ: Զարգացումն ու ինքնակատարելագործումը հնարաւոր են միայն այն պարագային, երբ մարդը պատրաստ է որեւէ նոր բանի:

6. Երեսպաշտները. Ասոնք այն մարդիկ են, որոնցմէ անընդհատ կեղծաւորութիւն կը յորդի: Երբ դուք զուարճալի պատմութիւն կը պատմէք, ի պատասխան անոնցմէ կը լսէք քաղաքավար ծիծաղ, թէեւ կը նկատէք, որ իրականութեան մէջ անոնց ծիծաղը չի գար: Առեւրես անոնք կ'ըսեն, որ կը սիրեն ձեզ, իսկ իրականութեան մէջ ծանօթ մարդոց կը պատմեն, թէ որքան յիմար եւ տհաճ մարդ էք:

-Ասոնց վտանգը. Այդպիսի մարդոց հետ յարաբերութիւնները մակերեսային են եւ անկեղծ չեն: Երբ դուք անոնց օգնութեան կարիքը զգաք, զանոնք չէք գտներ ձեր կողքը: Ձեր հետ ունեցած անոնց ջերմ յարաբերութիւնները ընդամէնը խաբկանք են:

7. Գռեհիկները. Ասոնք այն մարդիկն են, որոնք սովորութիւն ունին ամէն ինչ ընել ամենաանյարմար պահուն եւ ամենաանյարմար ձեւով: Անոնք ոչինչէն կը գզուշանան: Յաճախ այդպիսի մար-

Շար.ը էջ 18

## ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԻԶՈՒՂԻՆԵՐՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԱՔՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- Իրարու խառնել հաւասար չափով՝ առանց կուտերու աղացած կիտրոն (կեղեւի հետ միասին), մեղր եւ ձիթապտուղի իւղ: Պահել սառնարանի մէջ եւ խմել երիկամունքներուն մէջ աւազահատիկներ ըլլալու պարագային՝ մէկական ճաշի դգալ՝ օրը 3 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ :

Երիկամունքներուն մէջ քարի գոյութեան ժամանակ՝ 10 թէյի դգալ թրթնջուկի սերմերուն վրայ լեցնել 1 լիթր «կազոր» տեսակի գինի, թրմել 3 օր: Խմել ուտելէն 30 վայրկեան առաջ՝ օրը 3 անգամ, մէկական թէյի դգալ: Պարունակութիւնը օգտագործելէ առաջ ցնցել:

Մէկ ճաշի դգալ խնձորի մանրուած կեղեւին վրայ լեցնել 1 գաւաթ եռացած ջուր, թրմել 30-40 վայրկեան: Խմել երիկամունքներու բորբոքման ժամանակ՝ օրը 3 անգամ, գաւաթի 1/3 մասը, ուտելէն 30 վայրկեան առաջ: 50 կր. ընկոյզի միջուկը մանրելով փոշիացնել, վրան լեցնել 1 գաւաթ կաթ, եփել, ձգել, որ սառի: Խմել օրուան ընթացքին: Օգտակար է երիկամունքներու հիւանդութեան ժամանակ:

Դժուարամիզութեան պարագային՝ օրը 3 անգամ, ուտելէն 30 վայրկեան առաջ ընդունիլ ջրոսպի փոշի՝ վրայէն ջուր խմելով:

Երիկամային եւ լեղապարկի քարերու պարագային շատ լաւ է օգտագործել ճակնդեղի, վարունգի, ստեպղինի հիւթերու խառնուրդը (1:1,5:2 յարաբերութեամբ): Ամէն անգամ միզապարկի թուլութեան պարագային պատրաստել այս չափաբաժինը՝ 100 կրամ ուրցի սերմին վրայ լեցնել 1 լիթր չոր սպիտակ գինի, թրմել 1 ամիս՝ մութ, զով տեղ, պարբերաբար ցնցել հեղուկը: Խմել երիկամային, միզաքարային հիւանդութիւններու ժամանակ, սրտխառնոցի պարագային՝ իբրեւ միզամուղ՝ 50 կր., օրը 3 անգամ՝ուտելէն 30 վայրկեան առաջ:

Անոնք, որոնք որոշած են ազատիլ միզապարկի քարերէն, պէտք է ամէն օր խմեն սոխի թուրմ: Ապակեայ շիշը կէս չափով լեցնել մանրուած սոխով, մինչեւ վզիկը աւելցնել ալքոլ կամ օղի եւ 12 օր դնել տաք տեղ կամ արեւի տակ: Ապա քամել եւ խմել մէկ ճաշի դգալ, օրը 2 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ:

Իսկ կենատի Մալախովը կ'առաջարկէ երիկամունքները մաքրել ձմերուկի եւ սեւ հացի օգնութեամբ: Եթէ անօթի էք, ձմերուկ կերէք, եթէ ծարաւ էք, ձմերուկ կերէք, եթէ շատ անօթի էք՝ ձմերուկ եւ սեւ հաց կերէք: Այս մաքրման ընթացքը կը տեւէ 2-3 շաբաթ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷՆ

## Ի՞ՆՉ ՊԷՏՔ Է ՈՒՏԵԼ ՅԱՃԱԽ ԺՊՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Այսօր ոչ մէկը ապահովագրուած է ճնշումի դէմ, քանի որ մեր առօրեան գերծանրաբեռնուած ու լարուած է: Ջղային համակարգը կարգաւորելու համար մեր մարմինը պէտք ունի Պ կենսանիւթին, որուն օգտագործումը կ'օգնէ աւելի դիւրութեամբ յաղթահարելու ճնշում պատճառող իրավիճակները:

Վիթամին Պ1-ով հարուստ են հացը, հնդկաձաւարը, վարսակը, կորեկը, լուբիան, ոլոռնը, խոզի եւ հորթի միսը:

Վիթամին Պ2-ով եւ Պ6-ով հարուստ են կաթնամթերքը, միսը, լուբիան, հաւկիթը, թարմ պտուղը:

Մարմինը մակնեզիումով կը հարստացնեն ձուկը, ծովամթերքը, ծիրանը, չիրերը, բանջարեղէնը եւ պանանը: Բացի վիթամին Պ-էն, պէտք է նաեւ օգտագործել վիթամին Սի եւ պեթա քարօթին պարունակող ուտելիք՝ բանջարեղէն, կիտրոն, թուրինջ, նարինջ, հատապտուղներ (սեւ հաղարջ, ազնուամորի), կանաչեղէն:



## ՍՊԱՆԱԿԱՆ ՊՐԻՄԵՐԱՅԻ ԱԿՈՒՄԲԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՕԶԲԻԼԻՍԻՆ



Սպանական Պրիմերայում հանդէս եկող «Ռայօ Վալյեկանոն» ցանկանում է վարձակալութեամբ ձեռք բերել Մոսկուայի «Սպարտակի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արաս Օզբիլիսին, հաղորդում է tass-ը: «Ռայօ Վալիեկանոն» առաջարկ է արել ռուսական ակումբին: Բանակցութիւններն ընթանում են: Միակ խոչընդոտը Օզբիլիսի բարձր աշխատավարձն է՝ տարեկան 1.5 միլիոն եւրօ:

25-ամեայ հայ ֆուտպոլիստը 2013-ին է Կրասնոդարի «Կուբանից» տեղափոխուել «Սպարտակ» եւ 38 խաղում խփել է 4 գոլ: Պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2018թ. Յունիսի 30-ը:

«Ռայօ Վալիեկանոն» Սպանիայի առաջնութեան 19 տուրից յետոյ 15 միաւորով նախավերջին տեղում է:

## ԼԻՈՆԵԼ ՄԵՍԻԻ 5-ՐԴ «ՈՍԿԷ ԳՆԴԱԿԸ»



Իսպանական «Բարսելոնայի» յարձակուող Լիոնել Մեսին հռչակուեց 2015 թուականի լաւագոյն ֆուտբոլիստ:

Այդպիսով, Արգենտինայի հաւաքականի աւագը դարձաւ առաջին ֆուտբոլիստը, որը 5 անգամ արժանացաւ «Ոսկէ Գնդակ» մրցանակին:

Նա վաստակած միաւորներով առաջ անցաւ իր թիմակից, բրազիլացի յարձակուող Նեյմարին, ինչպէս նաեւ վերջին երկու տարիների դափնեկիր, Մադրիդի «Ռեալի» պորտուգալացի յարձակ-ուող Քրիշտիանու Ռոնալդուին:

Նշենք, որ Լիոնել Մեսին անցած տարի «Բարսելոնայի» կազմում նուաճել է հինգ տիտղոս, թիմի եւ հաւաքականի կազմում ընդհանուր առմամբ անցկացրել է 61 խաղ, որոնցում դարձել է 52 գոլի հեղինակ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ 2 ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ Կ'ԱՆՑԿԱՑՆԻ ԱՄՆ-ՈՒՄ




Այս տարուայ Մայիսի վերջին եւ Յունիսի սկզբին ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը երկու ընկերական հանդիպում կ՚անցկացնի Ամերիկայի Միացեալ Նահանգներում, հաղորդում է Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի կայքը: Հանդիպումները կ՚ունենան բարեգործական բնոյթ:

Յիշեցնենք, որ Մարտին Հայաստանի հաւաքականը կանցկացնի եւս երկու ընկերական հանդիպում: Մարտի 24-ին Վարուժան Սուքիասեանի գլխաւորած թիմը կը հիւրընկալի Բելառուսի հաւաքականին:

## ՄԻՇԷԼ ՏԷՐ-ԶԱՔԱՐԵԱՆԸ՝ «ՄՈՆՊԵԼԻԷՆ» ԳԼԽԱՒՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ



Ֆրանսական «Նանտի» գլխաւոր մարզիչ Միշէլ Տէր-Զաքարեանը մեկնաբանել է «Մոնպելիէն» գլխաւորելու մասին լուրերը:

«Մամուլում շրջանառւում են տարբեր լուրեր, թէ ես պատրաստւում եմ հեռանալ եւ արդէն պայմանագիր եմ կնքել «Մոնպելյէի» հետ: Պէտք է հերքեմ դա: Ես «Նանտի» մարզիչն եմ եւ այստեղ աշխատելու եմ մինչեւ 2016-ի ամառը, երբ լրանալու է պայմանագրիս ժամկէտը: Ակումբի նախագահը ցանկանում է շարունակել իմ հետ աշխատանքը»,- Հայաստանի հաւաքականի նախկին ֆուտբոլիստի խօսքը մէջբերում է Le 10 sport-ը:

Յիշեցնենք, որ Ֆրանսայի առաջնութեան առաջին շրջանից յետոյ «Նանտը» 24 միաւորով 14-րդն է, իսկ «Մոնպելյէն» ունի 22 միաւոր: Միշէլ Տէր-Զաքարեանը 2012-ից է գլխաւորում «Նանտը»:

## ԼԷՈՆ ՀԱՐԹԻ ԵՒ ՆՈԷԼ ԳԵՒՈՐԻ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ

Գերմանիայում հանդէս եկող հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկներ Լէոն Հարթը (Լեւոն Յակոբեան) եւ Նոէլ Գեւորը (Նորայր Միքայէլեան) յաղթանակներ են տարել հերթական մենամարտերում:

27-ամեայ Լեւոն Հարթը վարկանիշային մենամարտում պարտութեան է մատնել Սլովակիայի ներկայացուցիչ Վլադիմիր Իդրաինիին:

25-ամեայ Նոէլ Գեւորը WBO International գօտին պաշտպանել է՝ յաղթելով 39-ամեայ ռուսաստանցի Վալերի Բրուդովին:

## ԲԵՆԻՏԵՍԸ ՀԵՌԱՑՈՒԵԼ Է, ԶԻԴԱՆԸ՝ «ՌԷԱԼԻ» ԳԼԽԻՈՐ ՄԱՐԶԻՉ



Մադրիդի «Ռէալի» ղեկավարութիւնը որոշել է պաշտօնից հեռացնել թիմի գլխաւոր մարզիչ Ռաֆայէլ Բենիտեսին: «Վալենսիայի» հետ Սպանիայի առաջնութեան 18-րդ տուրում 2:2 հաշւով աւարտուած հանդիպումից յետոյ Արքայական ակումբի նախագահ Ֆլորենտինօ Պերէսը յունուարի 4-ին հրաւիրել է ակումբի ղեկավար մարմնի ժողով եւ որոշուել է խզել 55-ամեայ սպանացի մասնագէտի պայմանագիրը, իսկ գլխաւոր մարզիչի դերը վստահել «Ռէալի» երկրորդ թիմի մարզիչ Զինեդին Զիդանին: Այդ մասին ասուլիսում յայտարարել է «Ռէալի» նախագահը, հաղորդում է Marca-ն:

Սպանիայի առաջնութեան 18-րդ տուրից «Ռէալը» 37 միաւորով զբաղեցնում է երրորդ տեղը: Բենիտէսը «Ռէալում» աշխատեց 7 ամիս եւ անցկացրեց 25 խաղ (17 յաղթանակ, 5 ոչ ոքի, 3 պարտութիւն):

## ՓԼԱԹԻՆԻՆ ՀԱՆԵԼ Է ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ ՖԻՖԱ-ԻՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

ՈՒԵՖԱ-ի ղեկավար, Ֆուտպոլի միջազգային ֆեդերացիայի (ՖԻՖԱ) փոխնախագահ Միշէլ Փլաթինին հանել է իր թեկնածութիւնը ՖԻՖԱ-ի նախագահական ընտրութիւնների ցուցակից: Ֆրանսացի լեգենդար ֆուտբոլիստը որոշել է կեդրոնանալ իրեն առաջադրուած մեղադրանքների դէմ պայքարելուն: Վերջերս Փլաթինին ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերի պէս որակազրկուել էր 8 տարով եւ չի կարող այդ ընթացքում զբաղուել ֆուտպոլային գործունէութեամբ:

«Հանել եմ թեկնածութիւնս, որպէսզի կեդրոնանամ կոռուպցիայի մեղադրանքների վրայ: Երբ Բլատերը հեռացաւ, ինձ աջակցեցին 100 ֆեդերացիաներ, իսկ 50 ֆեդերացիաներից ստացայ պաշտօնական նամակներ: Այժմ պէտք է մտածեմ այլ բանի մասին: Շուտով քննարկումներ կը սկսուեն Լոզանի Մարզական վճռաբեկ դատարանում»,- Պլատինիի խօսքը մէջբերում է L'Equipe-ը:

Յիշեցնենք, որ ՖԻՖԱ-ի նախագահի թեկնածուների ցուցակում տեղ են գտել՝ Յորդանանի արքայազն Ալի բին Ալ-Հուսէյնը, Ասիական ֆուտպոլային կոնֆեդերացիայի ղեկավար Սալման բին Իբրահիմ Ալ-Հալիֆան, ՈՒԵՖԱ-ի գլխաւոր քարտուղար Ջանի Ինֆանտինոն, ՖԻՖԱ-ի գլխաւոր քարտուղարի նախկին տեղակալ Ժերոմ Շամիլը եւ հարաւաֆրիկացի գործարար Մոսիւա Սեկսուալէն: ՖԻՖԱ-ի նախագահական արտահերթ ընտրութիւնները կ՛անցկացուեն 2016 թուականի Փետրուարի 26-ին Ցիւրիխում:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## ԱՍՏՂԵՐԸ Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19
2016 տարին քեզի համար պիտի ըլլայ կարեւոր տարի մը հանրային կեցուածքդ դասաւորելու, միեւնոյն ատեն որոշելու գործի ասպարէզդ: Գարնան՝ կարգ մը դէպքեր համբերութիւնդ կրնան տկարացնել, սակայն շարունակէ ուղիդ: Ամառուայ շրջանին առողջութիւնդ նկատի առնելով, շատ պարտականութիւններ մի՛ ստանձներ: Ձմեռնամուտին քանի մը ուրախ շարժառիթներու ներկայ պիտի գտնուիս:

**ՑՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20
Նոր տարին քեզի պիտի բերէ մեծ յաջողութիւններ, սակայն անոնց իրականացումը կը կարօտի աշխատանքի եւ յարատեւութեան: Գարնան՝ սիրային արկածախնդրութիւն մը կը սպասէ քեզի: ինքնավստահութիւնդ պիտի բարելաւուի եւ սակայն ձմեռը թեթեւ յուսահատութիւն մը պիտի դիմագրաւես, որու հետեւանքով մտային զօրութիւն պիտի ունենաս:

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 21
Այս տարի խանդավառ եւ զբաղ տարի մը պիտի ունենաս շնորհիւ ստեղծագործական մտածելակերպիդ եւ երեւակայութեանդ: Գարնան՝ բազմաթիւ առիթներ պիտի ներկայանան քեզի ծանօթանալու կարգ մը հռչակաւոր դէմքերու հետ: Ամառը ճամբորդութեան բազում առիթներ պիտի ներկայանայ, իսկ Աշնան նպատակներդ կրնան իրականանալ:

**ԽԵՑԳԵՏԻՆ** Յունիս 22-Յուլիս 22
2016-ը քեզի համար պիտի ըլլայ շատ մեծ փոփոխութիւններու տարի մը: Փափաքիդ համաձայն պիտի կարողանաս նորոգել կեանքդ: Գարնան՝ սիրոյ զգացումներով պիտի լեցուիս, իսկ ամռան առողջութիւնդ պիտի բարելաւուի փոքր եւ չնչին վիրաբուժական հարցէ մը ետք:

**ԱՌԻՒԾ** Յուլիս 23-Օգոստոս 22
Ելեւէջներու տարի մը պիտի ըլլայ 2016-ը քեզի համար, բայց դուն զօրաւոր կամքովդ եւ յարատեւութեամբդ, անպայման կը յաղթահարես ռեւիզէ արգելքներ: Աշնան՝ պիտի կեդրոնանաս սիրելիներդ աւելի մօտեցնել քեզ եւ յարաբերութիւններդ մտերմացնել բոլորին հետ: Ձմեռը շատ բարեբեր պիտի ըլլայ:

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22
2016-ը քեզի համար բարիքներով լեցուն տարի մը պիտի ըլլայ, բարեկամներդ եւ ընտանեկան պարագաներդ լաւագոյն վարուելակերպը պիտի ունենան հետդ: Գարնան՝ գործընկերներդ պիտի հետեւին ցուցմունքներուդ եւ աշխատաձեւիդ: Ամռան՝ առողջութիւնդ կարճ ժամանակամիջոցի մը համար անկայուն ըլլալէ ետք՝ պիտի բարելաւուի:

**ԿՇԻՌՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22
Մարդիկ քու իսկական ինքնութիւնդ պիտի տեսնեն 2016 տարուայ ընթացքին: Ընկերային կեանքդ պիտի բազմապատկուի եւ ապրելակերպդ պիտի բարելաւուի շնորհիւ լաւատեսութեանդ: Տարուան առաջին ամիսներուն ծրագիրներդ պիտի կազմես, սակայն կարեւոր է որ շարունակես յարատեւութեամբ: Ամառը հիւրեր պիտի ունենաս:

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21
2016-ը քեզի համար պիտի ըլլայ առատութեան եւ բերկրանքի տարի մը: Ամռան սկզբնաւորութեան սիրային յարաբերութիւնդ պիտի ծաղկեցնէ տարիդ: Աշնան ակնկալէ քիչ մը գործի դժուարութիւններ, որոնք պիտի կարօտին անմիջական ուշադրութեանդ: Ձմեռը ընդհանրապէս հանդարտ պիտի անցնի:

**ԱՂԵՂՆԱՒՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21
Նոր 2016 տարին հզօր տարի մը պիտի ըլլայ քեզի համար, թէեւ տարին կրնայ համեստ սկսիլ, սակայն տարուան վերջը մեծ յաջողութիւններ պիտի ընդգրկէ: Գարնան՝ անակնկալ մը ուրախութեամբ եւ հրճուանքով պիտի լեցնէ սիրտդ: Աշնան ընտանիքիդ մէջ նոր անդամ մը պիտի աւելնայ:

**ԱՅԾԵՂՋԻՒՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19
2016-ին շատ մը նորութիւններ պիտի ըլլան կեանքէդ ներս: Գարնան՝ ընդհանուր կեանքդ փոխող քայլ մը պիտի առնես: Ամռան՝ ունեցած ընկերային ճարպիկութեանդ պատճառաւ՝ գործի բարձրացման պիտի արժանանաս: Ձմեռուայ ամիսներուն ընթացքին, դուն քու բախտդ պիտի բնորոշես առնելիք որոշումներուդ հիման վրայ: վստահէ դատողութեանդ եւ հայեացքդ բարձր սեւեռէ:

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18
Դուն աստղի մը նման պիտի փայլիս 2016 տարուայ ընթացքին: Գաղափարներդ, ծրագիրներդ եւ կարծիքներդ՝ ճանաչում պիտի գտնեն շրջանակիդ մէջ եւ պիտի յաջողին: Գարնան՝ ընտանեկան կեանքդ շատ զբաղ պիտի ըլլայ: Ամռան՝ հեռաւոր սիրելիներով պիտի շրջապատուիս: Ձմեռը պիտի տրամադրես անձնական հաճոյքներուդ:

**ՁՈՒԿ** Փետրուար 12-Մարտ 20
Պատրաստուէ նոր սկզբնաւորութիւններու 2016 տարուայ ընթացքին: Նոր ծանօթութիւններ պիտի կնքես, որոնք գործի նոր դռներ պիտի բանան դիմացդ: Գարնան՝ հակառակորդներէ զգուշանալու ես: Պէտք է շատ հեզ եւ համբերատար ըլլաս աշնան ընթացքին, որովհետեւ ձմեռը այդ վարուելակերպին արդիւնքները պիտի վայելես:

## ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԳԱՂՈՒԹԱՐԱՐ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ

*Շարունակուած էջ 5-էն*

*կան աշխարհին ներկայ ողբերգութիւնը սկսած էր հոն՝ Լիբանանի մէջ, ուր կը մղուէին կռիւները ուրիշներուն: Բոլոր կրօնական բնոյթ կրող կամ ունեցող միջադէպերը, իսլամ-քրիստոնեայ եւ իսլամ-հրեայ կերպարներով եւ անոնց ետին կեցող ու կանգնող մեծ պետութիւններու բլանաւորուած միջամտութիւններով, կռուադաշտ դարձուցած էին Լիբանանը, ուր ծնաւ ահաբեկչութիւնը իր բոլոր երեսներով: Եւ երբ արաբական աշխարհի սիւննի համայնքի ամենէն նշանաւոր դէմքերէն նկատուող եւ Սէուտական Արաբիոյ ու Արեւմուտքի հետ եզակի կապեր ունեցող Ռաֆիք Հարիրիի սպանութիւնը շարունակուեցաւ Իրաքի սիւննի նախագահ եւ բռնատէր Սատտամ Հիւսէյնի կախաղան հանուելով (Դեկտ. 2006), որմէ ետք մէկը միւսին ետեւէն ինկան սիւննի բռնապետերը արաբական աշխարհի՝ Թունուզի, Լիպիոյ եւ Եգիպտոսի, ոմանք հեռուէն դիտելով անհանգստացան տեսնելով Իրան-Իրաք-Սուրիա-Լիբանան (Հըզպալլա) շիի համայնքային ուժեղ եւ յաջող գինակցութիւնը, ուստի Արեւմուտքի բարեկամ Արաբական Ծոցի շէյխերն ու էմիրները սիւննի Թուրքիոյ մօտ ուզեցին գտնել շիի ուժեղ այդ գինակցութեան դէմ կանգնող ուժը: Եւ ահաբեկչութիւնը փոխադրուեցաւ Սուրիա եւ Իրաք՝ էրտողանեան Թուրքիոյ սահմաններէն տկարացնելու համար Իրանի դաշնակից այդ երկու երկիրները: Սակայն Թուրքիոյ մեղսակցութեամբ եւ թոյլտուութեամբ ծնած հրէշ «Տահէշ»-ը դարձաւ պատուհաս զինք ծնողներուն, որուն պատճառաւ Իրանի դէմ պայքարը Թուրքիոյ տեղ վերջերս ստանձնեց Սէուտական Արաբիան:*

*Այժմ Իրան-Սէուտական Արաբիա սուր պայքարը կը թուի թէ պիտի ըլլայ 2016 թուականի մտահոգիչ հարցը, որ կրնայ կրակով կլանել արաբական ու իրանեան աշխարհի սիւննի եւ շիի բոլոր ուժերն ու անոնց ետին կանգնող մեծ պետութիւնները: Նախկին գաղութարարներու «Սայքս-Փիքօ»-ական (Sykes-Picot) Միջին Արեւելքի ձեւաւորումը «խառն է՛ որ չինես»-ի տարազով, կարծէք դար մը ետք «բաժնէ՛ որ տիրես»-ի տարազ պիտի հագուի:*

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՄԱՐ ՏԽՈՒՐ ՏԱՐԻ ԷՐ

*Շարունակուած էջ 7-էն*

*Այսքանին գումարած նաեւ փաստը, որ Էրդողանն էլ կարծես հաւասարակշռութիւնը կորցրած լինի, քանի որ ոչ ոք չգիտի, թէ վաղն ինչ որոշում կը կայացնի, եւ դէպի ուր կ՚ընթանայ: Այս ամէնի պատճառով էլ տարին աւարտեցինք յոռետեսութեամբ, մարդիկ կորցրել են լաւատեսութիւնը, հաւատը վաղուայ օրուայ նկատմամբ եւ վախով եւ սարսափով են սպասում յաջորդ օրուան: Թուրքիայի մեծամասնութիւնն այսօր հենց այս մտահոգութիւնն ունի:*

*Հայ-թուրքական յարաբերութիւններում արդեօք զարգացո՞ւմ կայ:*

*Ակամայից յիշեցի Թուրքիայի նախկին նախագահներից մէկի հետեւեալ յայտարարութիւնը. «Հայոց ցեղասպանութեան գործընթացը մէկ անգամ տրաքելիք փամփուշտներ են: Թողէք մէկ անգամ արձակուի այդ փամփուշտը, տեսնենք՝ ինչ կը լինի»: Կարծես թէ այս տարի Թուրքիան հենց այս տրամաբանութիւնն ունէր: Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին մեծ արձագանք եղաւ միջազգային հանրութեան կողմից: Եթէ դիտարկենք, թէ մեր պահանջատիրութեան առումով ինչ նշանակութիւն ունեցաւ 2015թ.-ն, միանշանակ կարող ենք ասել, որ մեծ ձեռքբերումներ չենք ունեցել:*

*Նոր տարի է սկսւում, սակայն 2014թ.-ի մեր պահանջները նոյնն են մնացել: Պատճառն այն է, որ միջազգային հանրութեան համար Թուրքիան աւաւել կարեւոր է, քան Հայաստանը: Բնականաբար, 80 միլիոնանոց բնակչութեամբ Թուրքիան աւաւել հետաքրքիր է աշխարհի համար, քան 3 միլիոնանոց Հայաստանը:*

*Ափսոս, հայ ժողովուրդն այս իրողութիւնը դժուարանում է տեսնել: Մեզ համար աւաւել կարեւոր կը լինէր, եթէ հայրենիքը վերակերտէինք, Հայաստանը զարգացնէինք:*

*Պարոն Էստուկեան, 2015թ-ն առանձնայատուկ էր նաեւ Թուրքիայի հայ համայնքի համար, առաջին անգամ խորհրդարանում 3 հայ պատգամաւոր ունենք:*

*Հայերն ընդհանրապէս քաղաքականացուած չեն Թուրքիայում, եւ այս տարի առաջին անգամ մասնակցութիւն ունեցան Թուրքիայի քաղաքական կեանքում: 2015թ.-ն ուշագրաւ էր նաեւ այն փաստով, որ իսլամացուած հայերը մկրտուեցին: Ակնկալում ենք, որ այս ամէնը շարունակական կը լինի:*

## ՄԱՐԴՈՑ 7 ՏԵՍԱԿ, ՈՐՈՆՑՄԷ ՊԷՏՔ Է ԽՈՒՍԱՓԻԼ

*Շարունակուած էջ 16-էն*

*դոց փոխարէն ստիպուած կ՚ըլլաս դուն ամչնալ:*

*-Ինչով վտանգաւոր են ատոնք. Այս մարդիկ ոչ մէկ չափ ու սահման կը ճանչնան: Անոնք չեն յարգեր այլ մարդոց զգացումները եւ որեւէ ժամանակ կրնան դիւրութեամբ վիրաւորել ձեզ:*

*Եթէ կարելիութիւն ունիք խուսափելու անոնց հետ յարաբերելէ, ուստի օգտուեցէք այդ հնարաւորութենէն: Կեանքը բաւական կարճ է, որպէսզի անոնց վրայ ծախսէք ձեր ուժերն ու ժամանակը:*

## ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆ

*Ռաֆֆի Օհանեան Ընդ Սինթիա Վէզիրեան-Նէնէճեան*
*Ամուսնացեալք 9 Յունուար 2016*

*Այս ուրախ առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր ջերմ շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները կը յայտնէ ամուսնացեալ զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Սոնա Օհանեանին:*

# ԱՆՆՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԻՑ ԸՆԿԵՐ ՅԱԿՈԲ ՊԷՔԱՐԵԱՆԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Գոյժը անհաւատալի էր, ողբերգական պատահարը ահաւո՜ր, Աթէնքի կեդրոնին մէջ գտնուող տունը հրդեհ առած է, իր դուստրը եւ ապա՝ հիւանդանոցի մէջ ի՛նք՝ մեր խիզախ, նուիրեալ, հայրենասէր, գաղափարակից Ընկեր Յակոբ Պէքարեան յաւերժ հեռացած են այս տառապալից կեանքէն...: Ապա, կը բանամ «ֆէյսպուք»-ի իր սիրած էջը, հոն է՝ վայելուչ, կարմիր փողկապով, յաղթական եւ յուսատու ժպիտը դէմքին, կարծես թէ բան մը չէ պատահած եւ ի՛նք Լիբանանի քաղաքացիական պատերազմի դժնդակ օրերուն, ընտանեկան պայմաններու բերումով Յունաստանի մայրաքաղաք տեղափոխուած հաւատաւոր Լիբանանի հա՛յը, Ս.Դ.Հ.Կ. ելճանեանականը, որուն միակ երազն էր վերադառնալ Պէյրութ, կարելի բոլոր միջոցներով օգտակար դառնալ հայ գաղթօճախի պահպանման եւ Մայր հայրենիքի պահպանման երանելի պայքարին՝ անսպասելիօրէն զոհուեցաւ Աթէնքի «Սոտոմ-Գոմոր»-ին մէջ...:

Իմ ծանօթութիւնս Յակոբ Պէքարեանի հետ կը սկսի 1976-էն, «միջնորդութեամբ» նոյնպէս ելճանեանական Սարգիս Ռզեանի, առաջին իսկ հայեացքէն միշտ յարգելով ու սիրելով այս ոչ մէկ բանէ վախցող, միշտ զինուած ու պատրաստ պաշտպանելու իր տունը, թաղը, կուսակցութիւնը, հայութիւնը ամէն վտանգէ:

Մոլի ընթերցող էր, վերլուծաբան, նրբանկատ ու հեռատես:

Սիրուած էր բոլորէն, առատաձեռն ու շռայլ էր ամէն ինչի մէջ, անոր համար ալ իր խօսքը օրէ՛նք էր բոլորին համար որոնք քալեցին Յակոբ Պէքարեանի գծած ուղիէն: Դժբախտաբար սակայն, 1975թ.-ին պայթած Լիբանանի քաղաքացիական պատերազմը, հայերու թշնամիներուն ստոր նպատակները Յակոբ Պէքարեանի նման հերոս մարտիկները անհաբեկելու, շրջապատին ճնշման տակ «առժամաբար» տեղափոխուեցաւ Յունաստան, ուր նաեւ շարունակեց իր կուսակցական եւ հայրենասիրական աշխատանքը, ամէն առիթով այցելելով Պէյրութ, գոտեպնդուելու «Սփիւռքի Մայրաքաղաք»-ին ոգիով եւ շունչով:

Կեանքը ինչպիսի՜ անակնկալներ կը վերապահէ բոլորիս...:

Երկու տարի առաջ, լրագրական եւ այլ գործերով երբ Աթէնքէն անցայ, կրցայ վերագտնել աննման Յակոբ Պէքարեանը, իր վաճառատան մէջ, «Օմօնիա» հրապարակին մօտակայքը, որ դարձած էր գաղթականներու կեդրոն: Շշմեցայ Յակոբ Պէքարեանի քաջութեան վրայ, որ յաջողած էր գսպել բոլորը, յարգանք պարտադրելով, ընտանիք ու նոյնիսկ թոռնիկ պահել ու բարեկեցիկ ապրուստ ապհովելով, անընդհատ աշխատելով, ժամանակ ալ գտնելով, մանաւանդ երեկոյեան, գրուցելու Պէյրութէն, Հաճընէն թէ Պատաուի թաղամասերէն, իր կուսակցական թէ գաղափարակից ընկերներէն, որոնք մէկ առ մէկ կը յիշէր ապշեցուցիչ մանրամասնութիւններով:

«Այս վաճառատունս պիտի վաճառեմ մի քանի տարիէն ու պիտի վերադառնամ Պէյրութ, ծննդավայրս եւ ընկերներուս մօտ»- կը կրկնէր: «Երանի թէ չգայի այստեղ»... «Բայց եւրոպական անձնագիր ստացար եւ պետութիւնը կը հոգայ հիւանդ զաւակդ» - կը յիշեցնէր տիկինը:

Այդ անմոռանալի հանդիպման օրերը, շուտով դարձեալ Պէյրութ գալու եւ փորձել կազմակերպելու այնտեղի գաղափարակից ընկերները, լոկ երազ մնացին, միջազգային իրավիճակին սրման պատճառով Միջին Արեւելքի մէջ:

Սակայն ճակատագիրը դաժան գտնուեցաւ: Կարդացինք իր մահագդը: Ան աննկարագրելի տառապանք ապրեցաւ հիւանդանոցին մէջ, հէգ մարմինը այրուածքներով ծածկուած էր: Այսօր սակայն, ձերբազատուած իր երկրային մարմինէն, ան կը սաւառնի հոն, վերեւը, իր նահատակ ընկերներուն եւ բարեկամներուն հետ, անշուշտ՝ ինչպէս իր ամբողջ կեանքին ընթացքին փնտռելով ելճանեանը, Տխրունին, Մեծն Մուրատը, Փարամազը, որոնք իր իտէալներն էին եւ մնաց հաւատաւոր մինչեւ իր ողբերգական մահը:

Այս անդառնալի կորուստը, ծանր սուգի մէջ թողուց իր հարազատները, որոնց մխիթարելու համար բաւարար չեն հայերէնի բառերը: Հայկական Կիլիկիայէն տարագրուած հայու սերունդի անխուսափելի ճակատագիր, որ իր ամբողջ կեանքին ընթացքին դարձաւ իսկական հայ, կուսակցական, մարտիկ, ընտանիքի հայր, մոմի պէս վառելով ու լուսաւորելով իր եւ բոլորին ուղին:

Թող հողը թեթեւ գայ եւ յիշատակդ անթառամ մնայ սիրելի Յակոբ:

ՀԱՄՕ ՄՈՍԿՈՖԵԱՆ

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՋԱՏՈՒՀԻ ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան առթիւ Հ.Մ.Մ.ի Վարչութիւնը իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութ Կիւտէշեանին եւ Տէր եւ Տիկ. Յակոբ Կիւտէշեանին:

Առ այդ $100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ԱՋԱՏՈՒՀԻ ԿԻՒՏԷՇԵԱՆԻ մահուան առթիւ «Սահարա» ճաշարանի տէրեր, Գրիգոր եւ Կարօ Գրիգորեան եղբայրներ իրենց ընտանիքներով ցաւակցութիւն կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն: Մասնաւորաբար որդիներուն Յարութ եւ Յակոբ Կիւտէշեաններուն:

Առ այդ $200 կը նուիրեն «Մասիս»ին:

Նոյն առիթով Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Անի Պէքարեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն եւ $50 կը նուիրեն «Մասիս»ին:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ-ՖԵՐՄԱՆԵԱՆ

Լուլու (Խայեան-Ֆերմանեանի մահուան տասնվեցերորդ տարելիցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 25 Յունուար, 2016ին, Ս. Պետրոս Հայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, յաւարտ Ս. Պատարագի:

Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Սգակիրներ՝
Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան
Վիգէն Գույումճեան

## ՄԱՀԱԶԴ



ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆ (1933-2016)

Խոր ցաւով կը գուժենք մեր հօր, մեծ հօր եւ հարազատին՝ ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆԻ մահը որ պատահեցաւ Երեքշաբթի Յունուար 5, 2016ին: Թաղման եկեղեցւոյ կարգը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 13 Յունուար, 2016, առաւօտեան ժամը 10:30ին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, (2215 East Colorado Blvd. Pasadena CA 91106), ապա թաղումը՝ Liveoak Cemetry գերեզմանատան մէջ, (200 East Duarte Road, Monrovia, CA 91016):

Սգակիրներն են՝
Զաւակները՝
Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տեփոյեան եւ զաւակները՝ Վահագն եւ Ռաֆֆի
Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Ալիս Հաճինեան եւ զաւակը (Լիբանան)
Այրի Տիկ. Հիլտա Հաճինեան եւ զաւակները՝ Միշէլ, Տանիէլ եւ Հայկ
Տէր եւ Տիկ. Մկօ եւ Էլէն Փօշողլեան (Գանատա)
Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Վիքի Փօշողլեան եւ զաւակները (Լիբանան)
Տէր եւ Տիկ. Յակոբ եւ Մարօ Փօշողլեան եւ զաւակները (Լիբանան)
Օր. Անի Փօշողլեան (Իտալիա)
Տէր եւ Տիկ. Միշէլ եւ Սիլվա Ապսի եւ զաւակները (Լիբանան)
եւ համայն Հաճինեան, Տեփոյեան, Փօշողլեան, Էլ Խուրի, Եափուճեան, Թօփալեան, Բրուտեան եւ Քէշիշեան ընտանիքներ:
Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել «Մասիս» շաբաթաթերթին:

## ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀԱՅԿ ՀԱՃԻՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինն ու յարակից կառոյցները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վարդան եւ Կարինէ Տեփոյեանին:



